


Հայք Հաստատություն



Հարգանք
Գրիշինայ

ԽՈՂԵՐ

ԱՍՈՒՅԹՆԵՐ

ՊԱՏԳԱՄՆԵՐ

Երևան
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2018

ՀՏԴ 821.19-8 ԳՐԻՉԵՆՑ
ԳՄԴ 84(5Հ)
Գ 880

Գ 880 Վարդան Գրիչենց Խոհեր, ասույթներ, պատգամներ.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2018, 145 էջ:

Հեղինակի առանձնահատուկ կենսափորձի, Հայրենիքում և օտարության մեջ նրա բազմամյա ու բազմաբնույթ դիտարկումների, հետազոտությունների, ուսումնասիրությունների, ինչպես նաև Հայաստանի բաղձալի ապագայի համար նրա անխոնջ պայքարի բովից և քրիստոնեական աներեր ու լուսաշող հավատքից բխող ասույթների սույն գիրքը կարող է դաստիարակիչ և բարեփոխիչ զգալի նշանակություն ունենալ հայրենաբնակ ու աշխարհասփյուռ հայության ազգային ինքնագիտակցության և պետական-քաղաքացիական պարտաճանաչության համար:

ՀՏԴ 821.19-8 Գրիչենց
ԳՄԴ 84(5Հ)

ISBN 978-5-8080-1327-8

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2018

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Համայն հայության և Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների դիմագրաված տարատեսակ մարտահրավերները հաղթահարելու համար էական նշանակություն ունի հայ պետական և հասարակական կյանքում հոգեղենությունից բխող ազգային գաղափարական ու ըստ այմն բարոյական առողջ մթնոլորտի առկայությունը: Այս հիրավի՝ կենսական մթնոլորտի գոյացման համար հայության բոլոր հատվածներում մի շարք ուղղություններով անելիքների մեջ կարևոր է՝ ժողովրդի լայն խավերին, նրանց սրտին ու գիտակցությանը ոգեպնդիչ ասույթներ ու պատգամներ հասցնելը:

Պատմությունից հայտնի է, թե ժողովուրդների կյանքում, հատկապես շրջադարձային վճռորոշ պահերին որքան կարևոր են հավատավոր սրտաբուխ հոգեպարար ասույթներն ու պատգամները: Դրա ամենա նշանակալից օրինակը Գարեգին Նժդեհի ու այլ մեծերի այդ ուղղությամբ կատարվածն է:

Վարդան Գրիչենցի խոհերը, ասույթներն ու պատգամները բխում և ներշնչված են նախևառաջ նրա հավատքից և կրում են կյանքի իր ուրույն փորձառության ու տեսլականի կնիքը: Միաժամանակ դրանք ստույգ պատմական են ու արտահայտում են ներկայիս հայության կենսական հիմնախնդիրները և դրանց յուրահատուկ լուծումները քրիստոնեական աշխարհայացքի և հավատամքի հիմքով:

Վարդան Գրիչենցը իր այս ու իր բազմաթիվ այլ գրություններով ապացուցում է, որ հայության բոլոր կենսական խնդիրները կարող են լուծվել ու միաժամանակ դարավոր իղձերը կատարվել ճշմարիտ հավատքով և դրանից բխող ու դրա վրա հիմնված ազգային գաղափարախոսությամբ ու բարոյականությամբ, որը նաև կպահանջի և միաժամանակ նախադրյալներ կստեղծի հայրենասեր պարտաճանաչությամբ ապրող և ստեղծագործող հայ ազգային միաբանական ներդաշնակ ջանքերի համար:


Նա քաջ ճանաչելով այդ կենսատու ճշմարտությունը, և գիտակցելով դրա ազդեցությունը կարևորությունը ցանկանում ու ջանում է այդ մասին իրազեկել իր ընթերցողներին, որպես տոհմիկ իմաստությամբ ազգապահպան և պետականներտ իմաստաբանություններ պարունակող սերմեր:

Ամենայն հավանականությամբ, այդ սերմերից կընկնեն նաև ոչ պարարտ հողում՝ ուղղակի ժայռերի վրա կամ փշերի մեջ, ինչպես բազմիցս եղել է մարդկության, այնպես էլ մեր ազգի պատմության ընթացքում: Սակայն նույն պատմությունից նաև գիտենք, որ հայ ազգային դաշտը միշտ էլ ունեցել է ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԳՈՎ առլեցուն մշակներ, որոնք հատկապես բախտորոշ, բեկումնային ժամանակներում, հզոր ավյունով աճեցրել, ծաղկեցրել են հայոց Աստվածատուր գոյադաշտը՝ հակառակ տարատեսակ, կործանիչ փոթորիկներին:

Եվ ակնհայտ է, որ հայոց հունձնառատ դաշտն այսօր էլ կարիք ունի հավատավոր, ազնիվ, հմուտ ու անխոնջ մշակների, որ Աստվածաշնորհ ազգային-ժառանգական հավատ-

քով և մեր սրբակերպ մեծերի, կյանքի օրինակով տքնեն, ստեղծագործեն, պաշտպանեն և Տիրոջ օգնությամբ հայավայել ու Աստվածահաճո դարցնեն Հայ ազգային սուրբ գոյադաշտ ՀԱՅԱՍՏԱՆԸ:

Այս ճշմարտություններն իրազեկելու պարտաճանաչությամբ է նաև լույս ընծայվում Վարդան Գրիչենցի սույն «Խոհեր, Ասույթներ, պատգամներ» վերտառությամբ գիրքը:



Գլուխ 1-ին

Հոգեղեն

Իմաստաբանություններ



1. Չկա ավելի մեծ իմաստություն, քան հոգևոր իմաստությունը, որի գագաթնակետն Աստծո հավատքն է:

* * *

2. Հայ ազգի համար հավատքի էության բովանդակությունը քրիստոնեությունն է: Հայությունն այսօր հոգևոր իմաստության մեկ ակունք ունի միայն՝ քրիստոնեություն կամ... ոչինչ, ունայնություն ու անէություն:

* * *

3. Հային, հայությանը կապող հիմնական ուժը եղել է ազգի հանդեպ հոգու պարտքի զգացումը: Այն բխել է տիեզերական հավիտենականության մեջ հատուցում ստանալու քրիստոնեական հավատքից:

* * *

4. Այն, ինչը ճշմարիտ է, չի կարող օգտակար լինել:

* * *

5. Անհավատը միայն տեսածին է հավատում, հավատացյալը՝ նաև չտեսածին:

* * *

6. Որպես հույժ կարևոր հարց՝ հարկ է անդրադառնալ, թե ինչպիսին է հայության և Հայաստանի հոգեկան, գաղափարական ու բարոյական միջավայրը. պահպանվո՞ւմ է անաղարտության անհրաժեշտ աստիճանը հոգիներում, սրտերում, մտքերում, հարաբերություններում ու ազգի, հայրենիքի և պետության հանդեպ վերաբերմունքում: Արդյոք չի՞ անցել դրա «անթույլատրելի» սահմանը, որից այն կողմ անդունդ է, կյանքի բացակայություն:

* * *

7. Ազնվությունը կյանքի ակտիվության կենսահյուսքն է:

Առանց այդ կենսահյուսքի՝ որևէ քաղաքական, հասարակական, պետական, կրթական, մշակութային, գիտական գործունեություն, ինչքան էլ արհեստավարժ, զորավոր ու փայլուն թվա, ամուլ է, անկենսունակ:

* * *

8. Ամբողջ հայությունն ու Հայաստանը գոյատևելու, զարգանալու, զորանալու և բարգավաճելու համար պետք է լինեն ԼԱՎ՝ ազնիվ, առաքինի ու վեհ:

* * *

9. Հայության, ինչպես և մարդկության Աստվածաշնորհի հավատքը գործում է Ավետարանի իմաստությամբ, գիտությամբ և խաչի խորհուրդով ու զորությամբ:

* * *

10. Խաչը Խորհուրդն է մեր հավատքի, որով և մերժողը՝ խավարի ու հոգեբարոյական կոռումպացման ու անկման:

* * *

11. Ժողովուրդը եթե միամիտ կամ անմիտ է: Ժողովրդին եթե կարելի է խաբել, ապակողմնորոշել, տգիտության մեջ պահել, մեղա-մեղա, Աստծուն՝ ո՛չ. հնարավոր չէ...

* * *

12. Բարգավաճում ժողովրդավարությամբ, ժողովրդավարություն՝ ազատամտությամբ, ազատամտություն՝ արտահայտվելու ազատությամբ: Բայց այդ ազատ արտահայտումը կարգասավորվի, եթե Աստուծո խոսքի ճշմարտությամբ է...

* * *

13. Աստված մեր զգալու, ըմբռնելու և գնահատելու հատկությունները պսակել է խղճի ու արժանապատվության զգացումով և բարոյականության ըմբռնումով:

* * *

14. Հավատքով քաջությունը միշտ հաղթական է: Հավատքով քաջ հայը թող առաջ գա: Նրան կմիանան:

* * *

15. Այսօրվա մեր վիճակն արդյունք է մեր երեկվա արածների և չարածների: Ինչ որ լինելու ենք վաղը, արդյունք է լինելու մեր այսօրվա արածների և չարածների: Որպեսզի մեր վաղը այլ՝ ավելի լավ լինի, քան այսօր, պետք է փոխվենք՝ անելով, ինչ չենք արել, որ պետք է անեինք և չանելով այն, ինչ չպետք է անեինք, սակայն՝ արել ենք:

* * *

16. Մեր՝ հայության վաղը կարող է մեր ուզածից այլ լինել՝ նաև անկախ մեզանից, դեպքերի բերումով, բայց դա պատահականություն չի լինելու, այլ դրսից առաջացած հոսանքի հետևանք, որի ընթացքը թե ուր է մեզ նետելու, դարձյա՛լ կախված է այսօրվա մեր ով լինելուց, ինչ անելուց եւ ինչ չանելուց:

* * *

17. Բարի ծառից՝ բարի պտուղ, իսկ չար ծառից չար պտուղ է աճում: Հակառակը չի լինում: Բարի՛ք գործենք...

* * *

18. Որպես ամեն բարու սկիզբ ու վերջ և որպես հավիտենական Ալֆայի ու Օմեգայի էություն, Բարին՝ Լույսը, Աստուծո հավատքն է՝ Քրիստոսի Ավետարանով ու խաչով: Չարը դրա ուրանալն է և ծառայելով մամոնային՝ նյութապաշտությանը:

* * *

19. Ինչքան խեղճ է մարդ՝ առանց Աստվածային Հոգու: Նա արդյոք մա՞րդ է:

* * *

20. Հավատքով, մաքուր ու հեզ սրտով և խոնարհ հոգով արված աղոթքի զորությունը, մանավանդ տկարի, նվաստի ու անիրավվածի աղոթքի զորությունը մեծ է:

* * *

21. Դեպի բարին տանող բոլոր դժների բանալին Տիրոջ Խաչը կրողների մոտ է:

* * *

22. Անօրինությունը տևական չի կարող լինել, և դրա զոհի իրավագրկման հատուցումը տարբեր ձևերով անպայման կլինի:

* * *

23. Աստվածային կամքի, նպատակի, ծրագրի ճանաչումն ու կատարումը հնարավոր է՝ ապրելով ու առաջնորդվելով Աստուծո Սուրբ Հոգով:

* * *

24. Առանց Սուրբ Հոգուց սնվելու, լուսավորվելու՝ անհնարին է հայ մարդու հոգևոր, գաղափարական և բարոյական կենսագործունեությունը՝ մանավանդ հետևողական ու հարատևորեն:

* * *

25. Ինչպես մարմինը միշտ սննդի կարիք ունի՝ ապրելու համար, այնպես էլ՝ հոգին: Ինչպես սննդի և ապրելակերպի որակը պայմանավորում են մարմնի վիճակը, առողջությունը, նույնը և ավելին վերաբերում է հոգուն:

* * *

26. Մարմնին պետք չէ ծառայել. մարմինը պետք է պահպանել, սնուցել, խնամել՝ հոգով համար: Իսկ այդ կարելի է անել հոգով՝ ապրելով ըստ Ավետարանական պատգամի. «Հոգով գնացեք և մարմնի ցանկությունը չեք կատարի, որովհետև մարմինը ցանկանում է հոգուն հակառակ»:

* * *

27. Հոգին չի՝ ապրում մարմնի համար. մարմինը պետք է ապրեցնել, խնամել և պահպանել հոգով համար: Քանզի մարմինը միայն տունն է, պատյանն է հոգու, նաև միջոց է, որ հոգին գործի՝ աշխարհում, և մարդը հոգով կատարի Աստուծո կամքը, ծրագիրը, գործը:

* * *

28. Անբարոյականությունը, անբարոյական խոհերն ու արարքները՝ հասարակական, թե սեռական բնույթի, նման են գերեզմանոցի:

* * *

29. Անբարոյական արարքները, մեծ մասամբ զվարճանք լինելով, թվում է, թե կյանքն ուրախ են դարձնում: Դա միայն թվացություն է, ինչպես գերեզմանային անդորրն ու խաղաղությունը:

* * *

30. Խոսվում է տարբեր գույներով հանդուրժողականության և հավասարության մասին: Երկուսն էլ լավ են: Բայց... լավից (եթե այն իսկապես լավ է) պետք է լավն առաջանա, այլ ոչ թե հակառակը՝ վնաս ու կորուստ...

* * *

31. Եկեղեցու կանթեղի նյութական յուղը հայթայթվում է հավատացյալների աշխատանքի արդյունքով՝ դրամով:

Եկեղեցու կանթեղի հոգեղեն յուղը հայթայթվում է առաջին հերթին եկեղեցականների սրբությամբ ու աստվածապատվեր ծառայությամբ, ինչպես նաև դրա արդյունքի՝ ժողովրդի հավատքի գործերով:

* * *

32. Մեր եկեղեցիների նյութական յուղով կանթեղները վառ են, լուսավորում են, իսկ հոգեղեն յուղով կանթեղները յուղ ունե՞ն, տրվո՞ւմ է այդ յուղը, որ վառ լինեն... լուսավորեն...

* * *

33. Եթե հավատքի գեն կա, կա նաև հույսի գեն. Զույսի՝ մեր փրկության և վերելքի:

* * *

34. Աստուծո Սերն այն ձգողական ուժն է, որ մեզ իր Զոգու ոլորտում է պահում և չի թողնում, որ գլորվենք չարի ձգողական որոգայթների մեջ՝ ի հավիտենական կորուստ:

* * *

35. Ազգը չի կարող անշարժ վիճակում լինել: Կա՛մ առաջ է գնալու, կա՛մ էլ՝ հետ. Աստուծով առաջընթաց է լինում, անաստվածությամբ՝ հետընթաց:

* * *

36. Անձն ազատ է, եթե ստրուկ չէ հոգին: Ազատ հոգին իր հերթին հզոր գործոն է ստրկացած մտքի ազատագրման համար: Իսկ երբ ազատ է և միտքը, անձի կամ ազգի ստրկական կարգավիճակը դառնում է ժամանակավոր, ու լիակատար ազատագրումն, իր բոլոր դրական հետևանքներով, ժամանակի՛հարց է միայն:

* * *

37. Ջարմանալի, ցավալի և հույժ վտանգավոր է, որ համատեղ, ընդհանուր պայքարում – դրական կողմի մեջ գործակցությունն ու փոխադարձ աջակցությունն ավելի թույլ, անկազմակերպ ու անհետևողական է, քան դրականի հակառակորդների մեջ, որոնք ավելի կազմակերպված ու հետևողական են գործում՝ աջակցելով միմյանց :

* * *

38. Օգտակար, լավ և բարի գործի ապաքաջալերման համար շատ բան կա: Սակայն քաջությունը՝ Աստուծո հավատքով անսասան քաջությունը, ուղեկցված Ավետարանի իմաստությամբ, գիտությամբ և Խաչի շնորհքով ու զորությամբ, չեզոքացնում, վերացնում է ամեն տեսակի ապաքաջալերանք...

* * *

39. Մարդու միտքն առանց հոգու չի՝ կարող ըմբռնել հոգևոր գիտակցությունը:

* * *

40. Հավատքի մեջ չեզոքություն չի կարող լինել: Առավել ևս, չի կարող լինել ձևական, արհեստական կամ կիսատ հավատք:

* * *

41. Նահատակություն-մահը միայն ֆիզիկական, մարմնական է. էության մեջ այն մահ չէ: Բայց այդ մահը այն պատճառով, առաջացնողի համար այդ մահը նրա հոգեկան և բարոյական մահացումն է՝ Աստվածային օրենքով:

* * *

42. Բարեկեցություն, ուրախություն, երջանկություն, բերկրանք՝ լոկ ունայն խոսքեր են՝ առանց հավատքի, որի բովանդակությունը Աստվածային սերն է: Իսկ երջանկության իրական աղբյուր սերը լույս է Աստուծուց՝ Հորից, Որդուց ու Սուրբ Հոգուց՝ ամեն հավատացյալի համար:

* * *

43. Ավետարանը կարելի է մտքով կարդալ, սերտել և հիշել ամեն բառը, բայց հասկանալ ու ապրել նրանով՝ կարելի է միայն հոգով:

* * *

44. Ամենամեծ, ամենավտանգավոր ու ամենաանձնական հիվանդությունը մարդու սիրտ ցամաքումն է: Նրա հոգեկան, զգացական և գիտակցական ցամաքած երակների մեջ սիրտ ներարկումը կարող է լինել միայն Քրիստոսի՝ սիրով՝ հավատքի միջոցով:

* * *

45. Հոգու հավիտենական կյանքի կարգավիճակը պայմանավորված է մարմնի մեջ նրա ապրած երկրային կյանքի բնությով, որը կարող է առաջացնել իսկական կյանք՝ Աստուծո Արքայությունում կամ իսկական մահ՝ Դժոխքում:

* * *

46. Մարմնի, նյութի ունայնության դեմ հոգու հաղթանակն ապահովվում է, մարդու մեջ Սուրբ Հոգու առկայությամբ: Այսինքն՝ երբ մարդու հոգին բեղմնավորված է Աստուծո Սուրբ Հոգով և զորացած է Ավետարանի և Խաչի հավատքի շնորհով, Խորհրդով, իմաստությամբ և գիտությամբ:

* * *

47. Տկար հոգու գաղափարն ու միտքը ևս տկար են, բարոյականությունն ու կանքը տկար են, խիղճն ու գիտակցությունը տկար են. հետևապես, տկար են նաև գործերը:

* * *

48. Առանց հավատքի մարդ արարածի մարդկայնությունը մակերեսային է, փառքը սին և վայելչությունն՝ ունայն: Աստուծո հավատքն է, որ մարդուն մարդկայնացնում է Աստուծո կերպարով՝ ազատ կանքով ու անմահ հոգով:

* * *

49. Սրբությունն ու մեղքն անհամատեղելի են: Մեղքը մարդուն հեռացնում է Աստծուց: Աստուծո ճանապարհը և մեղքի ճանապարհը անհամատեղելի են: Չես կարող միաժամանակ երկու ճանապարհով էլ գնալ, երկու տիրոջ ծառայել:

* * *

50. Ամենամեծ աղքատը Աստծուն մոռացածն է: Ամենամեծ աղքատը Աստծուց հեռացածն ու Նրա շնորհից զրկվածն է:

* * *

51. Սուրբ Հոգու ամենամեծ ներգործությունն աշխարհում, մարդկության կյանքում տեղի ունեցավ Մարիամի Սուրբ հղիությամբ, որով Աստվածորդին՝ Աստված, մարմնացավ՝ ծնվելով որպես մարդ՝ կատարելապես ու սփռելով աշխարհին լույս և կյանք հավիտենապես...

* * *

52. Սուրբ Հոգուց են հղանում նաև Սուրբ Ուխտին հետևողների գաղափարները, որոնք վերածվելու են սուրբ գործերի. Սրբությունից Սրբությամբ՝ Սրբության համար՝ հայոց Աստվածակերտ անդաստանում՝ հայկականության հոգեղեն, գաղափարական ու բարոյական գոյության մեջ:

* * *

53. Հոգու փրկությունը նախառաջ լինում է Հիսուս Քրիստոսի Աստվածության ճանաչմամբ, որը նշանակում է հրաժարում, հեռացում նյութականացումից՝ նյութապաշտությունից, որովհետև հոգու փրկությունը պայմանավորված է հոգևոր, գաղափարական և բարոյական արժեքների պահպանմամբ, որոնք բխում են Աստուծո հավատքից և հիմնված են այդ հավատքի վրա, որը շատ ազգեր, ներառյալ մենք՝ հայերս, ճանաչում, ընդունում ենք Ավետարանով և խաչով:

* * *

54. Հայը երբ իր Արարիչ Հորն է սիրում ու այդ սիրով՝ Աստվածորդուն և նրա Խաչը, ապա սիրում է նաև մարդկությանը, մարդուն ու առաջին հերթին՝ հային և հայությանը: Ու ինչքան Աստվածապատգամ արարքների մեջ հետևողական ու հարատև է հայի Աստվածասիրությունը, ըստ այնմ է նաև նրա՝ հայ ազգի ու հայրենիք Հայաստանի հանդեպ Սերը:

Ու այդ Սիրո հասկացության ըմբռնումն առանցքն է Հայ Ազգային Գաղափարախոսության:

* * *

55. Անաստված գիտակցությունն ու գիտությունը, բնականաբար, զուրկ են Աստվածային իմաստությունից ու շնորհից, հետևապես՝ նաև կենսունակությունից ու կառուցողականությունից:

* * *

56. Պետք է զգույշ լինել արդարի հաշվին «գեշ» չլինելու և մարդահաճո դառնալու մտածողությունից, վերաբերմունքից և գործերից, որը կարող է Տիրոջ հանդեպ ուրացումի և դավաճանության, այսինքն՝ կորստի տանել: Դա կլինի մարդուի այն ճակատագրական սխալը, որով շահելու համար աշխարհը՝ կորցնում է հոգին...

* * *

57. Աստուծո՞վ իմաստնանալն ու հարստանալը և Աստուծո՞վ զարգանալն ու բարձրանալն է արգասաբեր, երջանկաբեր: Առանց Աստուծո՞ յուրաքանչյուր ձեռքբերում փո՛ւչ է, ունա՛յն, սին ու, ի՛ վերջո, վնասակար:

* * *

58. Ազատության կարևորագույն չափանիշներից է՝ ընտրելու ազատությունը: Բայց այդ ազատությունն առաջին հերթին պետք է գործածվի՝ ընտրելու համար Աստուծո ճանապարհը, որը կյանք է, այլ ոչ թե ընտրելու՝ աստվածամերժությունը, որը տանում է դեպի մեղք՝ մահ:

* * *

59. Հայ ազգը պետք է ազատ լինի՝ ընտրելու բարին, որն Աստվածասիրությամբ է: Դրանով հայը հասու կլինի բարուն՝ դառնալով բարի ու ապրելով բարի կյանք՝ կենսունակ, ստեղծագործ, պտղաբեր: Եվ հայի մեջ կծաղկի, կգորանա և կգործի հավատքն առ Աստված՝ Ավետարանով և Խաչով, որը ակունքն ու հիմքն է Հայ Ազգային Գաղափարախոսության և բարոյականության նախապայմանը՝ հայության բոլոր հարցերի լուծման ու ամենանվիրական իղձերի կատարման:

* * *

60. Յուրաքանչյուր հայի և հայության իրական, իսկական ինքնաճանաչումն ու ինքնահաստատումը սկզբնավորվում է հավատքով՝ հոգու իմաստությամբ, ապրում է հոգեղենությամբ, գաղափարականությամբ, բարոյականությամբ ու ավարտվում է հոգու անմահությամբ:

* * *

61. Աստուծո հավատքով, այսինքն՝ ճշմարտության գիտությամբ մարդն իր բնույթի և իրեն տրված կարողության չափով հաղորդ է լինում Աստվածային էությանը, որը մարդու գերագույն կատարելության, նրա անգերազանցելի իմացականության հիմքն ու պայմանն է:

Հայը, հայությունը դարերի հոլովություն այդ իմացությանն է արժանացել Աստվածաշնորհ Ավետարանով և խաչով:

* * *

62. Անձի սրբությունը միջոց և պայման է նրա փրկության և ինչ-որ չափով նաև նրա շրջապատի փրկության համար:

* * *

63. Ճշմարտությունը Աստուծո խոսքն է, որը Սրբություն է և մարդուն, հային սրբացնում է՝ նախ և առաջ Հիսուսի Աստվածության ճանաչմամբ:

* * *

64. Հիսուսը միշտ մեզ հետ է: Նա՛ է մեր խաղաղությունը:

Կյանքի տարբեր փոթորիկները հաղթահարելով, ավելի մաքրված, սրբված՝ Հիսուսի խաղաղությունն ունենալու համար հարկ է հավատալ, որ Հիսուսը միշտ մեզ հետ է, մեզ սիրում է և մեզ փրկում է:

* * *

65. Հայ մարդու ամենամեծ ու էական գանձը հավատքն է, որը նրա Աստվածակերտ էությանը մղում է ծառայելու իր Արարիչ Հորը՝ սովորելով, ճանաչելով և կատարելով Նրա Սուրբ Կամքը, պատվիրանները և գործերը՝ միշտ ու ամենուր:

* * *

66. Ուխտյալ հայի համար Խաչը, որը նա պիտի կրի ու տանի իր կյանքի ընթացքում Տիրոջ հետևից, հայ ազգին ծառայությունն է, որով և ծառայություն՝ Հայաստանին ու հայոց պետությանը:

* * *

67. Հայ մարդ, դու հարուստ ես՝ անհատնում հարստությամբ: Հայ մարդ, դու անհաղթ ես՝ անանց հզորությամբ: Եվ, հայ մարդ, դու երջանիկ ես՝ Աստվածային հավերժական սիրով:

* * *

68. Հայը, երբ իր Արարիչ Հորն է սիրում ու այդ սիրով Աստվածորդուն և Նրա Խաչը, տոգորվում է այդ սիրուց բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, բարոյականությամբ ու այնժամ սիրում է նաև մարդ արարածին, մարդկությանը և առաջին հերթին՝ հային ու հայությանը:

* * *

69. Բոլոր «ինչոները» լուծվում են հոգու, հոգևորի ու Աստուծո Սիրո մեջ:

* * *

70. Անհատ թե ազգ, ինչին որ հավատում, պաշտում, ապավինում, ծառայում ու հետևում է, նա այն է դառնում: Եթե նյութին է ծառայում, ապա նյութական է, եթե Աստծուն՝ Աստվածային է: Առաջինը՝ նյութը, ինչ աստիճանի մեծ, բարձր և փայլուն էլ լինի, ի վերջո նյութ է անցողիկ, ունայն՝ «ունայնութիւն ունայնութեանց»:

Երկրորդը՝ Աստվածայինը, ինչ աստիճանի դժվարությունների էլ բախվի ու Ավետարանական «նեղ դռներով» անցնի, վերջում կհասնի լայն «Դռանը»՝ Լուսին հոգևոր, անանց ու հավիտենական:

* * *

71. Մեր հավատքի լավագույն ապացույցը Տիրոջն ապավինելն է՝ առանց որևէ տարակուսանքի:

* * *

72. Հավատքի իմաստությունն ու գիտությունը մարդու, ազգի և մարդկության համար կյանքի կենսունակության աղբյուր է: Այդ իմաստության և գիտության ջահերն Ավետարանն ու Խաչն են: Իսկ Ավետարանին և Խաչին հարազատությունն ու հավատարմությունն Աստվածային շնորհ է:

* * *

73. Չարը՝ սուտը, ամեն տեղ կատարել և կատարում է ավերներ՝ նպատակ ունենալով մեզ վրա հաստատել իր՝ մեղքի տիրապետությունը:

Մեր ազատության և կյանքի գոյության համար մեր անելիքը նախ՝ մեր սրտերի և մտքերի մաքրումն ու մեր հավատքով գաղափարականացանալն է, որով և սիրտ սրտի, միտք մտքի և ձեռք ձեռքի ազգովին կազմակերպվելով՝ վերականգնելն է մեր ազգային հոգեղենության, բարոյականության և կենցաղավարության, որոնց հետ միասին նաև քաղաքականությանը՝ ազգային կյանքի բոլոր բնագավառներում, ներքին ու արտաքին բոլոր վարույթներում:

* * *

74. Երբ իր հավատքին մեր հավատարմության համար Աստված մեզ հետ է, էլ ո՞վ կարող է դեմ կանգնել մեզ, խոչընդոտել մեր հաղթանակները և կասեցնել մեր վերընթացը:

* * *

75. Խաղաղության Աստվածն Ինքն է սրբացնում մեզ ամբողջապես և մեր ամբողջ հոգին, շունչը և մարմինն իր Խոսքով անարատ պահում՝ մինչև մեր Տեր Յիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը:

* * *

76. Հայն իր գոյության սկզբից շնորհակալ է եղել իր Տեր Աստծուն: Հայն այժմ էլ և միշտ, ամենուր ու ամեն ինչում պիտի շարունակի շնորհակալ ու շնորհընկալ լինել:

* * *

77. Հայ քրիստոնյայի (ինչպես և ամեն մի քրիստոնյայի) մշտական ու հիմնական թշնամին քրիստոսամարտ սատանան՝ ստի հայրն է: Նրա զենքը սուտը, բամբասանքը, խարդավանքը, խարդախությունը, կեղծիքն ու կեղծավորությունն է: Իսկ նպատակն է՝ դրանցով խաբելն ու ապակողմնորոշելն անտարբերությամբ, անզգամությամբ, տգիտությամբ տկարացնելով, գերելով, ստրկացնելով, խորտակելը, կորստյան մատնելը՝ հայ քրիստոնյային (ինչպես ամեն մի քրիստոնյայի), ապա և ամեն մարդ արարածի:

* * *

78. Հայ մարդը պետք է լինի քրիստոնյա (նման իր նախնիներին, մեծերին, սրբերին)՝ հավատքով, կոչումով և կյանքի ապրումով:

* * *

79. Եթե հայը քրիստոնեությունից խորթացած կամ անգիտացած և կամ ինչ-որ ծնով հեռացած վիճակում լինի (անկախ հանգամանքներից), նշանակում է՝ նա ուրացած է իր հոգևոր ժառանգությունը և դավաճանած է իր էությանը:

* * *

80. Հայ քրիստոնյան, Արարիչ Հոր Միածին Որդու՝ Հիսուսի հարությանը հավատալով, կսիրի՝ իր մերձավորին և մասնավորապես յուրաքանչյուր հայի՝ իր անձի պես:

* * *

81. Հայ քրիստոնյան կարիք ունի՝ Ավետարանով և Խաչով, հոգևոր իմաստությամբ և գիտությամբ՝ կատարելու կամ չկատարելու այն, ինչը վճռորոշ նշանակություն ունի իր՝ թե՛ այս և թե՛ հավիտենական կյանքի համար...

* * *

82. Սողոմոն ու Գոմորը կործանվեցին, որովհետև նրանց բնակչության հաշվեկշռում չարի ծավալն ավելանալով՝ անցել էր սահմանը, այսինքն՝ սահմանը՝ Աստուծո համբերության:

* * *

83. Աստված նայում, հաշվի է առնում ինչպես մարդ անհատի, այնպես էլ ազգի, երկրի ու մարդկության մեջ բարու և չարի հաշվեկշիռը և դրանց սահմաններն ու աստիճանները: Երբ առաջանում է բարու և չարի հարաբերակցության սահմանի մի որոշակի աստիճանի խախտում, դրանից այն կողմ Աստուծո գութն ու բարությունը գործում են՝ պատժելով և պատիժների միջոցով խրատելով:

* * *

84. Հայն ու հայությունն իրական, լիարժեք ու ընդմիջտ կյանք ունենալու համար պետք է ազատ լինեն, իսկ դրա համար պետք է ճանաչեն համընդհանուր ու անանց՝ հավերժական ճշմարտությունը՝ Հիսուսի Աստվածությունը:

* * *

85. Ի՞նչն է բաժանում, հեռացնում մարդուն (հային) Աստուծոց, եթե ոչ մեղքը, որի գազաթնակետը հոգեկան, գաղափարական և բարոյական կաշառվածությունն է (կոռումպացումը), որն սկսվում է մարդու (հայի) խոհերում, տարածվում նպատակներում և գործի է վերածվում նրա արարքներում:

* * *

86. Աստուծո հանդեպ հայ մարդու հավատքը պաշտպանվում, պահվում, հարատևում և գործում է Հայ Ընդհանրական ու Առաքելական Սուրբ Եկեղեցվո դավանանքով՝ խղճի, զգացումների և գիտակցության անմիջական, գործնական արտահայտմամբ:

* * *

87. Հավատքի պահապան ու ազգային հավատքի համաժողովրդական կրթարան Հայաստանեայց Եկեղեցին, ըստ իր կոչումի, պայծառ է լինում ու գործում է ոչ թե անպայման հարստության, ունեցվածքի (շինություններ և այլն) մջջոցով, այլ եկեղեցականների մեջ Սուրբ Հոգու առկայությամբ:

* * *

88. Բոլորն են ձգտում երջանկության, և դա բնական է ի վերուստ... Սակայն ի՞նչ է երջանկությունը. նվաճել, ունենալ և մսխե՞լ, թե՞ ստեղծելով, ծառայելով, տալով՝ շահել:

Ու առաքյալները, որ ծառայում, տալիս էին իրենց Ուսուցչի՝ Հիսուս Քրիստոսի օրինակով, և նույնն էին անում մեր ազգի մեծերը, սրբերը, ֆիդայիները, ազատամարտիկները, նրանք մի՞թե կորցնում էին կյանք. նրանք դժբա՞խտ էին, թե՞ գե՛րերջանիկ: Նրանք հիմա՛ էլ ու հավիտյան երանության մեջ են և մեզ պաշտպան ու օրինակ:

* * *

89. Անաստվածությունը (աթեիզմն ու նյութապաշտությունը), գործածելով ամենայն աշխարհիկը՝ նյութը (անցողիկ, սին, ունայն), դարձել է կրոն, պաշտամունք և քառատրոփ արշավում է երկրագնդի երկարություններով ու լայնություններով՝ թիրախ ունենալով նաև հայությունն ու Հայաստանը՝ այլասերելու և գերելու համար մարդկանց սրտերն ու մտքերը, կործանելու նրանց հոգիները:

* * *

90. Աշխարհում աներևո՞յթ պատերազմ է տեղի ունենում՝ ոչ միայն մեր երկրին, ինչքին և մարմիններին տիրանալու, այլև մեր և մեր երեխաների, թոռների հոգիների խեղմամբ մեր սրտերն ու մտքերը գերելու համար: Որից հետո այլևս մենք մենք չե՛նք լինի ու ազգովի ապագա՛ էլ չենք ունենա:

* * *

91. Բարի գործը խղճմտանքով, գթասրտությամբ, սիրո կամեցողությամբ, ողորմածությամբ և հոգու ուրախությամբ կատարված գործն է, որը հաճելի է Աստծուն և Նրա կողմից հատուցելի՝ հավիտյանս:

* * *

92. Բարի գործեր կատարելը մարդու, հայի հոգևոր առաքելությունն է այս աշխարհում: Դրանով են իմաստավորվում մարդու, հայի ծնունդը, ապրած կյանքը, մահը և, ըստ կատարած գործերի, արարքների՝ հատուցումը, նրա մուտքը հավերժական կյանք՝ Երկնային թագավորություն:

* * *

93. Եկեղեցին այն Աստվածապարզ և կառույցն է, որ պաշտպանում, պահպանում է հավատքը, դրանից բխող բարոյական արժեքները և ուսուցանելով ու օրինակ ցույց տալով՝ փոխանցում է սերունդներին:

* * *

94. Մեր ազգի հավատքի հոգևոր ժառանգության հանդեպ մեր հավատարմությունը պայծառացնում է թե՛ մեր Եկեղեցին, թե՛ մեր ազգը և թե՛ մեր հայրենիք Հայաստանն ու պետությունը:

* * *

95. Աստծուն պետք է երկրպագել հոգով, որովհետև Նա հոգի է, և ճշմարտությամբ, որովհետև Նա՝ է ճշմարտությունը:

* * *

96. Սրբության «գրամը» ավելի զորեղ և ներգործող է, քան պղծության կամ նույնիսկ անտարբերության ապականող «տոննաները»:

* * *

97. Սողոմն ու Գոմորը չփրկվեցին, որովհետև նրանց մեջ չգտնվեց մի «պտղո՛ւնց» իսկ սրբություն՝ արդարություն: Հայաստանը կփրկվի, որովհետև կարո՛ղ է ունենալ մեկ, երեք, յոթ, տասներկու, քառասուն և նույնիսկ հազա՛ր-հազա՛ր «բուռ» սրբություն:

* * *

98. Սրբությունը՝ ներքին գեղեցկությունը, բարությունն ու, ի վերջո, սերը, լույսը արտահայտվում են սրբի ոչ միայն և ոչ այնքան արտաքինում՝ արտաքին տեսքում, այլ նաև ու հիմնականում նրա վերաբերմունքի և գործերի մեջ...

* * *

99. Մարդն իր ունեցած թանկագին ժամանակն ու եռանդը՝ էներգիան, հավատքի պարագայում ներդնում է իր հոգու հավերժական փրկության վրա, իսկ անհավատը ներդնում է իր մարմնի, ժամանակավորի, անցողիկի վրա: Ու երբ ժամանակն անհավատի կողքով է անցնում՝ անիմաստ և կորչում է ապարդյուն. հավատացյալի համար այդ ժամանակը հավերժական արդյունք է բերում:

* * *

100. Սրբացումը փրկություն, վերելք և կյանք է ոչ միայն սրբացածի համար, այլև նրա շրջապատի՝ նրանց, որոնց համար լինում է այդ Սրբացումը: Սա ճշմարտություն է՝ անանց:

* * *

101. Հայության, հայ ազգի և հայրենիք Հայաստանի հոգևոր, գաղափարական, մշակութային ու կրթական կյանքն այնպիսի վիճակում է, որ վաղուց ի վեր պահանջում է վերակենդանացում՝ իսկական քրիստոնեական բուժմամբ:

* * *

102. Մարդու, ազգի և մարդկության գոռոզամիտ հպարտությունն ու ամբարտավանությունն ամրապնդում են այդ տեսակի մեղքը, և քանի որ դա զգվելի է Աստուծո առաջ, կասեցնում է Աստված- մարդ հարաբերությունը:

* * *

103. Հպարտությունը, որ առաջացնում է ամբարտավանություն, պարզապես մարդու բնավորություն չէ, այլ՝ չարի գլոբալ ցանց, որը մերժելի և զուրկ է Աստվածությունից, քանի որ իր պարունակով ահամատեղելի է Աստվածությանը:

* * *

104. Գոռոզամիտ հպարտն իրեն միշտ բարձր է համարում ուրիշներից և ըստ այնմ էլ վերաբերվում է՝ մատնվելով ինքնանվաստացման:

* * *

105. Գոռոզամիտ հպարտը դժբախտ է: Նրա համար օգտակար է, եթե սովորում է ղեկավարության ներքո ծառայել, որովհետև այդ ծառայությունը մեծ մասամբ համեստացնում, հեզացնում և խոնարհեցնում է մարդուն՝ նվազեցնելով, մեղմացնելով գոռոզամիտ հպարտությունը և նպաստելով նրա բարձրացմանը:

* * *

106. Մի անսովոր, սակայն շատ օգտակար իրողության, ճշմարտության փաստացի հիշեցում. ով մեծամտորեն ապավինում է իր կարողությանը, մոլորյալ է, որով և մերժում է Աստծուն:

* * *

107. Խիղճը մարդու հոգեղենության նախադրումն է և պաշտպանը ամենայն մոլորությունից:

* * *

108. Հոգեղենության սկզբնավորումը խղճով է: Առանց խղճի չկա հոգեղենություն, ինչպես առանց հոգեղենության չկա խիղճ, քանզի մեկը մյուսի լրացումն ու արտահայտությունն է կյանքի հարաբերություններում: Խղճի բացակայությամբ այդ հարաբերություններն անհոգի են դառնում՝ անկախ իրենց փայլից: Դրանք անառողջ լինելով՝ ենթակա են տգեղ աղավաղումների, այլասերման և կորուստների:

* * *

109. Խիղճը Աստծուց մարդուն ի բնե տրված սուրբ «զգայարանը», անգիր Օրենքն ու Արդար Դատավորն է, որն ավելի ուշ տրվեց նաև Հիմն Կտակարանով և սրբագործվեց Նոր Կտակարանով: Իսկ ներկայիս մարդկության մեջ նենգ ու պիղծ ջանքեր են կատարվում, չեզոքացնելու այդ սրբագործումը:

* * *

110. Խղճով է, որ դեռ Աստծուն չճանաչած, նրա Խոսքը չլսած՝ անձը, ազգը, ժողովուրդը ապրում և գործում են արդարությամբ ու բարոյականությամբ... Որովհետև խիղճն ինքնըստինքյան Աստվածակիր-Աստվածադիր է:

* * *

111. Խիղճը նաև Աստվածային ազդարար, չարի կանխարգելիչ է. առաջնորդող լույս է և մարդու ճիշտն ու սխալը գնահատող, դատող, անաչառ ու անկաշառ ներքին դատավոր է:

* * *

112. Աստվածային Օրենքը բարոյական օրենքի արմատն է, որը խղճով սնում է Աստուծո Խոսքին ծարավ սրտերն ու մտքերը:

* * *

113. Խղճով՝ նայիր Խաչին, վստահիր ու ապավինիր Խաչին, զղջա՛, խնդրի՛ր, և կմաքրվես. սրտիդ ժանգը կչքանա, և հոգուդ աչքերը կբացվեն, լսողությունդ կվերականգնվի, և դու կզգաս, կտեսնես, կլսես ու կճանաչես ճշմարտությունը՝ Աստվածորդուն, Ով քեզ կազատի, և կդառնաս հավերժ ազատ:

* * *

114. Պղծության բաբելոնը միշտ էլ ձգտել է իր համար որևէ հարմար ձևով վերակազմավորվել, վերականգնվել ու աշխարհի տարբեր վայրերում համաշխարհային իր նկրտումների հասնել: Եվ դա, ըստ երևույթին, բավականին լայն մասշտաբներով արդեն իսկ տեղի է ունենում՝ հասնելով նաև հայի աշխարհը:

* * *

115. Հոգևոր տեսողությամբ միայն կարելի է տեսնել, ըմբռնել, հասկանալ մարդկության պատմական զարգացման օրինաչափությունները և կատարվածների իմաստը՝ պատճառն ու հետևանքը:

* * *

116. Քրիստոսից հեռացումը նշանակում է հեռացում ճշմարտությունից ու արդարությունից, լույսից և կյանքից:

* * *

117. Չարը՝ սուտը, ամեն տեղ ձգտում է կատարել և կատարում է հոգևոր ավերներ՝ նպատակ ունենալով հաստատել իր մեղքի տիրապետությունը:

* * *

118. Մարդու համար չարի ծուղակը չընկնելու կամ չարի ճանկերից փրկվելու առաջնային միջոցը ճշմարտության ճանաչումն է, որով և սրբացումը: «Որովհետև Աստուծո խոսքը ճշմարտություն է», - ազդարարում է Ավետարանը:

* * *

119. Քրիստոնեական կրոնին զանգվածներով հետևելու հետ միասին եղել է նաև հեռացման որոշ միտում ու հեռացում: Սակայն այսօրվա աշխարհում այդ հեռացումը դարձել է զանգվածային: Ու աստվածամերժությամբ՝ այդ հեռացման մեջ սանձարձակ գործում են նյութապաշտությունը, հոգևոր, գաղափարական ու բարոյական կոռումպացումը և ընդհանրապես չարը՝ թշնամի՝ն գոյի:

* * *

120. Մարդը, հայը նյութապես և գիտելիքներով այսքա՛ն հարստացող, սակայն հոգեպես և զգացմունքներով նույնքա՛ն ու ավելի՛ աղքատացող չէր լինի, եթե պահպաներ իր հոգեղենությունը: Եվ դրա թե՛ պատճառը և թե՛ հետևանքը կորուստն է հավատքի, որով և դրանքց բխող ու դրա վրա հիմնված գաղափարականության, բարոյականության ու ըստ այնմ՝ տոհմիկ հարազատ կենցաղավարության:

* * *

121. Օվկիանոսը եթե չի կարելի շշի մեջ ամփոփել, պարունակել, ապա առավել ևս չի կարելի երկնայինը, հավիտենականը աշխարհին, անցողիկին ենթարկել, հպատակեցնել, որով և հավերժ կորցնել:

* * *

122. Մարդուն, հային ի վերուստ տրված կյանքի սահմանափակ ժամանակն ու եռանդը, էներգիան պետք է իմաստությամբ և խղճով օգտագործվեն, որպեսզի լիովին պտղաբեր են:

* * *

123. Մարդու, հայի խիղճը, լինելով հոգու հատկություն, գործում է Աստուծո հավատքից գոյացած հոգեղենությամբ՝ Ավետարանով և Խաչով: Իսկ ազգային գիտակցությունը՝ որպես իմացականության հետևանք, գործում է նույնպես դրանով ու նաև Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, որը ևս բխում է և հիմնված է դարձյալ Աստուծո հավատքի վրա՝ Ավետարանով և Խաչով:

* * *

124. Մարդկության, ինչպես և հայության կյանքում նորը միշտ չէ, որ լավ է, էլ չասած՝ ավելի լավ է, քան նախորդը, «հինը»: Սակայն եթե նորն ընդունվեց և կիրառվեց ազատ կամքով, և փորձը ցույց տվեց նրա գերազանցությունը հնից, ապա այդ նորը պետք է փոխարինի (և բնականոն պայմաններում միշտ էլ փոխարինում է) հնին:

* * *

125. Քրիստոնեական հավատքի, գաղափարի և բարոյականության ըմբռնմամբ և կենցաղավարությամբ հայը նաև ազնվանում, ասպետանում է և Աստվածորդու ուսուցանած օրինակով, դառնում է երկրի աղ ու աշխարհի լույս:

* * *

126. Գիտակցությունը եթե գիտությունից, կրթությունից, դաստիարակությունից և գաղափարականությունից է, ապա խիղճը, լինելով հոգևոր «կատեգորիա», ունենալով հոգևոր ծագում, բխում է Աստուծո հավատքից և ըստ այնմ՝ կարգավորում մարդու, հայի կյանքը:

* * *

127. Ինչպես երկաթի մեջ ածխածնի բաղադրությունը կարծրացնում, կտրող- «աշխատող» պողպատ է դարձնում երկաթը, այնպես էլ մարդու խիղճը կենդանացնում, պտղաբեր է դարձնում մարդուն, ազգին ու հասարակությանը: Դրա համար հայի խիղճը պետք է միշտ մաքուր ու արթուն լինի:

* * *

128. Մեծագործությունները սնվում են զոհաբերության ոգուց, իսկ այդ ոգին գոյանում է սիրուց: Սեր, որ չի հոգնում, չի խորթանում, չի վիատում, չի... (ինչպես ասված է Ավետարանում):

Հայ աշխարհիկ և հատկապես հոգևոր ղեկավարության առաջնային նպատակը, խնդիրը և գործը հայության մեջ այդ սիրո ծաղկուն առկայության ապահովումն է:

* * *

129. Լավ է ասվել, որ աշակերտի գլուխը տուփ չէ, որ լցվի, այլ պատրույգ է, որը պետք է բոցավառվի, որպեսզի նա ուզենա մտածել, սովորել և... սովորեցնել գործերով:

* * *

130. Լինում է այն ամենը, ինչ Արարիչն ուզեց հայ ազգի համար: Դրա համար լինում է և այն, ինչ հայ մեծերը, սրբերը ցանկացան և գործեցին Արարչի Հոգով՝ հայ ազգի համար: Դրա շարունակությունը ժամանակակից հայության մեջ փրկարար ու երջանկաբեր կլինի:

* * *

131. Երբ հոգում հավատքը ցամաքում, և մարդը՝ հայը, լրիվ նյութականանում է, այնժամ միայն որովայն է խոսում ու ապրում, իսկ գաղափարը՝ լռում և մահանում:

* * *

132. Մարդու, ազգի, մարդկության, հետևապես և հայի ու հայության հոգեղենությունը բաղկացած է Աստվածային սիրուց և շնորհվում է հավատքով՝ Աստվածաճանաչմամբ ու կյանքում հավատարմորեն Նրա պատգամների կատարմամբ:

* * *

133. Հոգեղենությունն այն վիճակն է նաև, երբ անձը (հայը) չի՝ ուզում կաշառվել և կոռումպացմամբ ապրել: Չի՝ ուզում և վերջ: Եվ հավատքով գոյացած հոգեղեն վիճակ է՝ չուզելը, զգվելը, խորշելը և չկոռումպանալը, կաշառվածության չմատնվելը՝ որպես հոգեբարոյական նվաստացում, ու նաև որպես ծանր մեղք՝ հրող դեպի հավերժական դատապարտություն և տանջանք:

* * *

134. Կանգ առ, մարդ, հայ մարդ, մի՛ շարունակիր, ընդհատի՛ր, կասեցրո՛ւ ընթացքդ, եթե դեպի այնտեղ, ուր փայլ ես տեսնում, չկա Աստուծո խոսքը: Կեղծ և թվացյալ է այդ փայլը. մի՛ գայթակղվիր, մի՛ գնա, կանգ առ, որ չտարվես, չխրվես մեղքերի մահասփյուռ ճահիճը:

* * *

135. Ներկայիս կյանքում տարբեր կողմերից մոլորեցնող կեղծ ու պիղծ հոսանքներ են հարձակվում նաև մե՛ր երկրի վրա: Ինչպե՞ս չխաբվես, ինչպե՞ս չմոլորվես և չկորչես դու և քո երեխան: Մի՛միայն՝ Ավետարանի և Խաչի հավատքով ու ըստ այնմ ապրելով՝ քո և քո երկիր Չայաստանի համար:

* * *

136. Կյանքից ավելի բարձր արժեք էլ կա՝ Սերը, որն ընդունակ է նաև զոհաբերվելու: Սերը զոհաբերություն է մերձավորին և դրանով՝ Աստծուն:

* * *

137. Սիրով է, որ մեր նախնիները, մեծերը, սրբերը դիմադրեցին չարին, հավատարմությամբ դիմացան անպատում տառապանքներին ու արժանացան նահատակության և մարտիրոսության անանց փառքին: Առանց Սիրո նահատակություն ու մարտիրոսություն չի՛ կարող լինել. իսկ դրանք անմահություն ու հավերժ երջանտություն ու երանություն են:

* * *

138. Մարդկային կյանքի կոռումպացումը սաստկանում, ավելանում է հոգեղենության (հավատքի, գաղափարականության և բարոյականության) տկարացմամբ, նվազեցմամբ ու արդյունքում՝ նարդու այլասերմամբ:

* * *

139. Առանց հոգևոր սննդի (որն Աստուծո ի ոսքն է՝ ճշմարտությամբ, Ավետարանի միջոցով)՝ հոգին տկարանում, նվաղում, մեռնում է: Հարուստ, վայելչակազմ ու կենսուրախ անձնավորություն կամ հասարակություն՝ մեռած հոգով, «կավե ոտքերով հսկա» է՝ ենթակա փշրման և կորստի:

* * *

140. Բնության անաղարտության նորմերը սահմանվում են, որպեսզի ապականում ու փչացում չառաջանա:

Սակայն կա փչացում, որը ոչ թե շրջապատի ապականվածության կամ հակառակորդների թշնամության պատճառով, այլ մեր հոգևոր, գաղափարական և բարոյական անաղարտության անկմամբ՝ ապականության հետևանքով են առաջանում, տարածվում և փչացնում են մեր ու հատկապես մեր մատաղ սերնդի կյանքն ու հոգին:

* * *

141. Աստուծո սիրո լույսը տալիս է շնորհ, ու շնորհը՝ հավատք, հավատքը՝ փրկություն, գաղափար. մեր դեպքում՝ Հայ Ազգային Գաղափարախոսություն, որով առաջանում է ազգային այնպիսի՝ բարոյականություն ու կենցաղավարություն, որոնք հաղորդում են գործություն, ստեղծագործություն և կյանք՝ լույսից, լույսով ու լույսի համար՝ միշտ վերընթաց:

* * *

142. Ոչնչից լույս, ջերմություն, եռանդ չի ստացվի: Եվ նյութի՛ց հոգի, սեր՝ լույս չի ստեղծվի, սակայն Հոգուց, Սիրուց՝ լույսից կստեղծվի նաև նյութ ու նյութական կյանք, որը կստեղծագործի և կհարատևի, եթե Սիրուց է, Սիրով է և Սիրո համար:

* * *

143. Մարդկության թշնամու՝ չարի գործածած բազմապիսի և բազմաբնույթ զենքերը գործածվում են մեկ նպատակով՝ տարածելու չարիքը և կործանելու կյանքը՝ այժմ և հավիտենապես:

* * *

144. Թշնամու՝ չարի վաղեմի և ուրույն զենքերը՝ կեղծիքները, ծուղակները, ուղղված են՝ ընդարմացնելու մարդու, հայի և հատկապես հայ մատաղ սերնդի գիտակցությունը և, ի վերջո, խիղճն ու հոգեղենությունը: Ի պատասխան դրան՝ մենք՝ հայերս, որպես ազգային անվտանգություն, պարտավոր ենք պաշտպանել մեր ազգային ինքնագիտակցությունը, մանավանդ խիղճն ու հոգեղենությունը, քանի դեռ դրանք լիովին չեն ընդարմացել:

* * *

145. Հայ ազգ, հավատա՛ և կփրկվես. կմաքրվես, կգորանաս, կաճես, կբարգավաճես ու կերջանկանաս հիմա, միշտ և հավիտյան:

* * *

146. Հոգու տեսողությունը նավի ռադարի պես ապահովում է մարդու, հասարակության, ազգի նպատակասլացությունն ու կենսագործունեության ընթացքը՝ շրջանցելու համար տեսանելի ու անտեսանելի ժայռերը, խութերը՝ միաժամանակ խուսափելով ամեն տեսակի ավազախրումներից:

* * *

147. Հոգու տեսողությունը խաչն ու խաչի հավատքն է, որը տալիս ու հաստատում է իսկական, բացարձակ ազատություն և պաշտպանում ու առաջնորդում է բարեհույս ուղղություններով՝ վանելով, հեռու պահելով չարը:

Առանց խաչի չկա՝ և չի՝ կարող լինել ազատություն՝ հոգու, մտքի և կյանքի:

* * *

148. Ասվել է և հավատում ենք, որ խաչը տիեզերական է, և դրա մեջ նաև մեր ազատությունն ու կատարելությունն է. խաչի դեմ պայքարն այնտեղից է սկսվել ու այնտեղ էլ ավարտվելու է՝ բարու հաղթանակով:

* * *

149. Խաչի շնորհը, զորությունը և փրկությունն անանց է: Խաչին հետևողական ու հարատև երկրային հավատքը, նվիրումն ու հավատարմությունը նաև երկրային ու երկնային երանություն է՝ հավետ:

* * *

150. Երանի Հայկազուններին, որ միշտ ու ամենուր Խաչի հավատքով և դրանից բխող Հայ Ազգային Գաղափարախոսությամբ ու բարոյականությամբ են ապրում, գործում, ստեղծագործում և իրենց Արարիչ Հորը՝ Աստծուն են ծառայում՝ ծառայելով իրենց ազգին, հայրենիքին և պետությանը:

* * *

151. Երանի մարդկության հարազատ մաս հայությանը, և նրա հայրենիք Հայաստանին ու պետությանը, որ առաջնային շնորհի ստացան հավատալու Խաչին, պաշտելու Խաչը, մարտիրոսանալու Խաչի համար և վերակենդանանալու՝ Խաչի լուսավորությամբ՝ հավիտենական կյանքի համար:

Երանի և հայ սերունդներին՝ Խաչի հավատքի ժառանգորդներին:

Գլուխ 2-րդ

Հայ Ազգային Գաղափարախոսությունը՝

Հայության կենսունակ

Հարատևության գրավական



1. Համաձայն Հայ Ազգային Գաղափարախոսության՝ գաղափարախոսությունը մարդկային կյանքը, գոյությունն ու վարքն իմաստավորող տեսություն է:

* * *

2. Գաղափարախոսությունը այն կրողների էությունը, հավատամքը, համոզմունքները, տեսակետները, ձգտումները, նպատակները և դրանց կենսագործման միջոցներն ու կերպերը բնորոշող տեսությունն է, փիլիսոփայությունն է, դրոշմն է: Միաժամանակ՝ գաղափարախոսությունը դրանց սահմանումն է, դրանց վերաբերյալ անձնային ու ազգային ամենապաշտոնական ու ամենահանդիսավոր արտահայտության ամրագրումն է՝ հավատքի և սեփական պատվի ամենաբարձր արժեքների երաշխավորմամբ:

* * *

3. Գաղափարը բոլոր դեպքերում պետք է անհամեմատ ավելի մեծ ընդգրկում ու արժեք ունենա, քան նրա վրա հենվող որևէ ազգային նպատակ և շարժում: Ամեն անգամ, երբ դրանք արժևորվում են ավելի, քան ինքը՝ Գաղափարը, շարժման գաղափարական հիմքը թուլանում, չեզոքանում է:

* * *

4. Քրիստոնեական հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ ազգային գաղափարախոսությունը, ըստ այնմ՝ գիտակցությունը և պարտաճանաչությունը եղել են ու կմնան հայ ազգի, Հայաստանի և հայոց պետականության ու պետության պահպանման, զարգացման ու վերելքի հզորագույն գործոններ՝ ժամանակի և տարածության մեջ:

* * *

5. Բազմաթիվ են հայոց թշնամիները: Բայց դրանցից ամենաոխերիմ և վտանգավոր թշնամին՝ Հայ Ազգային Գաղափարախոսության թշնամին, անաստված քրիստոսամերժությունն է:

* * *

6. Աստվածորդու հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության համաձայն՝ հայը ծառայում է Աստծուն՝ ծառայելով իր ազգին՝ հայությանը, որպեսզի հայությունն էլ ծառայի Աստծուն՝ ծառայելով մարդկությանը, որպեսզի մարդկությունն էլ ծառայի Աստծուն՝ միշտ ամենուր, ամեն ինչում:

* * *

7. Հայության որակական կատարելագործումն սկսվում է իր ազգային գաղափարախոսության ճանաչմամբ, ընդունմամբ և կիրառմամբ՝ անձնական ու ազգային կյանքի բոլոր բնագավառներում, հանգրվաններում. մի նպատակ և գործընթաց, որն, ըստ երևույթին, կենսականորեն անհրաժեշտ է, որ հիմք դառնա հայության, Հայոց պետության ու Ամենայն Հայոց Հայրապետության ռազմավարական կենսագործունեության համար:

* * *

8. Հայոց դավանանքը և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը պետք է դառնան հայ մարդու կրթության աղբյուրը և քաղաքացիական դիրքորոշումը: Դրանցով պետք է ձևավորվի Հայ ազգային ինքնագիտակցությունը, դրանցից պետք է սնվեն մշակույթը, կենցաղավարությունը, հասարակական հարաբերությունները, և դրանցով պետք է ուղղորդվի ու ընթանա Հայ պետական կյանքը՝ հավատքի 1700-ամյա լուսավորմամբ:

* * *

9. Հայոց քրիստոնեական հավատքի ու Հայ Ազգային Գաղափարախոսության կրթվածությամբ, մշակությամբ, ազգային քաղաքացիական ինքնագիտակցությամբ և հասարակական հարաբերություններով ձևավորված Հայոց պետությունը կունենա շուրջ տասը միլիոն քաղաքացի՝ ամբողջ աշխարհում: Տասը միլիոն հայ՝ մարդկայնորեն առաքինի, ազգայնորեն պարտաճանաչ և պետականորեն՝ ինքնակառավարվող Հայաստանի հայ քաղաքացի:

* * *

10. Ապրելով և գործելով իր քրիստոնեական հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ՝ հայ ազգը կդառնա աշխարհի աղը: Կդառնա կենսունակ, ստեղծագործ, բարգավաճ ու օգտակար մասը մարդկության, իսկ Հայաստանը կդառնա նրա լուսավորության նմուշ-օրինակ-կրթարաններից մեկը:

* * *

11. Հայ Ազգային Գաղափարախոսության ճանաչմամբ, գիտակցմամբ ու ըստ այդմ ապրելով՝ ժամանակակից հայը վերալուսավորվում է, Սուրբ Հոգով վերաորոգրվում է Աստծուն և դառնում Նրա հնձի աննկուն, անհաղթահարելի և կենսատու մշակը:

* * *

12. Սեփական անձից և նույնիսկ ազգից ու հայրենիքից ավելի բարձր գաղափարին զորագրումը, ավելին՝ այդ գաղափարի (որը Հայ Ազգային Գաղափարախոսությունն է) միսն ու արյունը և նրա էության մասը դառնալը կարող է ապահովել հայության կենսականորեն կարևոր խնդրի կատարումը՝ ԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐ ՈՐԱԿԻ ԳՈՅԱՑՈՒՄԸ, ԱՍՏՈՒԾՈ ՇՆՈՐՀՈՎ:

* * *

13. Քրիստոնեական հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության գիտակցմամբ առաջացված ազատասիրությունն ու դրանով կերտված ազատության մշակույթն է կենսատու ժողովրդավարության ձևավորման նախապայմանը:

* * *

14. 1700 տարի առաջ Աստվածային հավիտենական և որհուրդների և ծրագրերի Աստվածաշնորհի հավատքով ընկալումից ծնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը դառնալով հավատավոր պետական կյանքի ապրում՝ Ազգի Սուրբ Ասպետությամբ սնեց Թարգմանչաց ու Վարդանանց ոգին, լուսավորեց նրանց գործերը և հարթեց փրկության ճանապարհը՝ հայի հավիտենական կյանքի...

* * *

15. Աստուծո հավատքը՝ Քրիստոսի Ավետարանով և Խաչով ու նրանցից բխող և նրանց վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը ոգով և դրանցով մեր նախնայաց վարքն ու խոսքը պետք է դառնան հայ ժամանակակից հասարակության, հայ անհատի (որտեղ և ինչ վիճակում էլ նա գտնվի) և մանավանդ նոր սերնդի իրազեկության, դաստիարակության, աշխարհայացքի, բարոյական արժեքների ձևավորման ու ըստ այնմ՝ կենցաղավարության և կյանքի տարբեր բնագավառներում կողմնորոշման փարոսի ու վարքականոնի հիմքը:

* * *

16. Արդարև ոչ մի ճշմարիտ ստեղծագործություն չի կատարվի առանց գաղափարական հիմքի: Ոչ մի ազգային էական նպատակ, ծրագիր և գործ չի արդյունավորվի՝ առանց գաղափարի: Իսկ գաղափարը կենսունակ է, եթե բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա, ինչպես Հայ Ազգային Գաղափարախոսությունն է:

* * *

17. Մարմինը, որ մեղքով է լի, մահին է պատկանում: Իսկ հոգին, որ հավատքով է, կյանքին է պատկանում՝ ըստ Աստվածային կանոնի, որ ճանաչում ենք Հիսուս Քրիստոսի Ավետարանի հավատքով, իմաստությամբ, գիտությամբ և Նրա Խաչի Շնորհով ու Խորհրդով:

Դա՛ է մեզ ասում նաև այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը:

* * *

18. Գաղափարականությամբ սրբանալ՝ չի նշանակում ճգնափորություն և կամ մարդկանցից ինչ-որ ձևով և վիճակով մեկուսացում, այլ նրանց հետ առնչվելով, նրանց օրինակ ծառայելով ու օգնելով՝ կյանքի գործուն Աստվածահաճո ապրում:

* * *

19. Հայն ու հայությունը պետք է չթողնեն, որ հուսո արևը խավարի, որպեսզի հայ կյանքը չխամրի: Մշտական պիտի լինի հույսը՝ Աստուծո հավատքով, Քրիստոսանվեր Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, բարոյականությամբ և դրանցից առաջացած նախնյաց վարքի օրինակով:

* * *

20. Հայության կյանքի ապրում դարձած Հայ Ազգային Գաղափարախոսության կենսակերպ կիրառության ընթացքում Հայաստանում կառաջանա մի նոր քաղաք՝ Քրիստոսակերտ անվամբ:

* * *

21. Հայ Ազգային Գաղափարախոսությունը, լինելով հայոց տոհմիկ հավատքի քաղաքացիականացումն ու քաղաքականացումը, նաև այդ հավատքի գործերի վերացման ճանապարհային քարտեզն է հայ կյանքում...

* * *

22. Հայ ազգի մեջ սրբացումը՝ որպես երկաթը պողպատ դարձնող պայման, տեղի է ունենում նաև գաղափարականացմամբ, եթե գաղափարը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով և Խաչով (ինչպիսին է հայության դեպքում՝ Հայ Ազգային Գաղափարախոսությունը):

* * *

23. Խիղճը, լինելով հոգևոր հատկություն, գործում է հոգեղենությամբ գոյացած Աստուծո հավատքից, Ավետարանով և Խաչով: Իսկ գիտակցությունը, որպես իմաստ, իմացականության երևույթ, հայության պարագայում արգասաբեր է լինում, երբ հիմնվում է Հայ Ազգային Գաղափարախոսության վրա, որը բխում է Աստուծո հավատքից՝ Ավետարանով և Խաչով:

* * *

24. Հայ Ազգային Գաղափարախոսությամբ քաղաքականացումն առաջացնում է ազգային-պետական կենսական շահերի ճշմարիտ ճանաչում, գիտակցում և դրանց պաշտպանության համար (բացի քաղաքացիական գիտակցությունը, պարտաճանաչությունը, զորեղ կամքը, վճռականությունն ու նվիրվածությունը) նաև քաղաքական գրագիտություն, հմտություն և կազմակերպվածություն:

* * *

25. Հայ Ազգային Գաղափարը՝ որպես հավատքը գործի վերածող Աստվածաշնորհ գործոն, առաջացնում է հավատքի բարոյական չափանիշներով հոգեկան պարտաճանաչմամբ ու պատրաստականությամբ Աստվածապատգամ ապրելակերպ:

* * *

26. Հայ ազգային հոգեբարոյագիտության՝ որպես ուսմունքի, զարգացումն ու ուսուցումը մեծապես կօգնեն այնպիսի՝ ազգային, քաղաքացիական ինքնագիտակցության և պարտաճանաչության գոյացմանը, որոնք կենսականորեն անհրաժեշտ են՝ ձերբազատվելու համար հայության տարբեր հատվածներում տարբեր չափերով ու ձևերով տեղ գտած օտարածին ախտերից ու դրանց հետևանքներից:

* * *

27. Համաձայն Հայ Ազգային Գաղափարախոսության՝ գաղափարախոսությունը մարդկային կյանքը, գոյությունն ու վարքն իմաստավորող տեսություն է:

Գաղափարախոսությունն այն կրողի էությունը, հավատամքը, համոզմունքները, տեսակետները, ձգտումները, նպատակները և դրանց կենսագործման միջոցներն ու կերպերը բնորոշող տեսությունն է, փիլիսոփայությունն է, դրոշմն է:

Միաժամանակ գաղափարախոսությունը դրանց սահմանումն է, դրանց վերաբերյալ ազգային ամենապաշտոնական ու ամենահանդիսավոր արտահայտության ամրագրումն է՝ հավատամքի և սեփական պատվի ամենաբարձր արժեքների երաշխավորմամբ:

* * *

28. Երկար ժամանակ հայությունը մեծամասամբ անտեսեց, մոռացավ, նույնիսկ ուրացավ իր ազգային գաղափարախոսությունը, որն արտահայտում է իր էությունը, իմաստավորում ու արժևորում է իր գոյությունը, կողմնորոշում է իր ընթացքը, տալիս է իրեն ուժ, զորություն, դիմացկունություն ու իրական կյանքի անսասան, հաստատուն ու հավերժական ԵՐԱՇԽԻՔ:

* * *

29. Հայ ազգն ունեցել է ազգային գաղափարախոսություն (ՀԱԳ): Այդ նշանակում է, որ այսօր էլ այն կա՝ Ուստի, քանի որ կա, այլ գաղափարախոսություն փնտրելը կամ նոր գաղափարախոսություն ստեղծելն անիմաստ է, որովհետև եղածից բացի՝ ուրիշը չի՝ կարող լինել: Ուրեմն, ՀԱԳ-ի պակասություն չկա: Պակասում են նրա ճանաչումը, որոշակի ձևակերպմամբ ընդունումը և կիրառումը՝ կյանքի բոլոր հանգրվաններում:

* * *

30. Էական է ըմբռնել, թե ինչ է Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ): Ե՞րբ և ինչի՞ց է այն առաջացել: Ինչի՞ վրա է հիմնված: Ի՞նչ դեր է կատարել դարերի ընթացքում: Ի՞նչ նշանակություն է ունեցել հայության գոյության համար: Եվ այսօր ինչպիսի՞ն է ՀԱԳ-ի դերը և նշանակությունը հայ ազգի ու նրա հայրենիքի գոյատևման, զարգացման ու բարգավաճման համար:

* * *

31. Հայկ Նահապետից հետո հայերիս ազգային գաղափարախոսությունը սրբագործվեց մեկ թվականին՝ Աստուծո մարդեղինությամբ՝ աշխարհի Փրկիչ Հիսուս Քրիստոսի Ծնունդով, և նորոգ սկսեց կենսագործվել երեք հարյուր մեկ թվականին՝ Հայոց Պետականության Քրիստոնեացմամբ ու Հայոց Հայրապետության հիմնադրմամբ:

* * *

32. Հայ Ազգային Գաղափարախոսությունն արտահայտել է հայ ազգի, Հայոց Հայրապետության և Պետության Հավատամքն ու գոյության իմաստը՝ 301 թվականից ի վեր, երբ տիեզերական ու հավիտենական խորհուրդների ակունքից բխող Աստվածաշնորհի հավատը դարձավ Ազգային Գաղափարախոսության հիմքը՝ հայ ժողովրդի բոլոր խավերի համար՝ թե՛ ավագանու, թե՛ շինականի, թե՛ աղքատի և թե՛ հարուստի:

* * *

33. Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ) հայության հավատքի երկնականարուն ծագեց որպես լուսատու աստղ և կողմնորոշեց նրա պատմական ընթացքը: ՀԱԳ-ն այնպիսի նոր իմաստ և ուղղություն տվեց հայի անձնային ու ազգային կյանքին, բարձրացրեց ազգի կենսունակությունը, զորացրեց նրա ստեղծագործ ոգին և օժտեց ազգն անընկրկուն դիմացկունությամբ, որն ի զորու դարձրեց նրան՝ իր դարավոր երթում հաղթահարել խոչընդոտները, փորձությունները և երրորդ հազարամյակի շեմին վերականգնել իր ազգապետությունը:

* * *

34. Աստուծո հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության համաձայն՝ Հայոց պետականության քրիստոնեացմամբ հայ ազգը վերակերտեց իր կյանքը, վերստեղծեց իր մշակույթը և Աստվածատուր, աննահանջ դիմադրողականությամբ ընդդիմացավ թշնամուն՝ չարին, դիմացավ փորձություններին ու հարթեց իր գոյության աստվածապատվեր ուղին՝ դարերի միջով:

* * *

35. Բոլոր պայմաններում՝ ստրուկ թե ազատ, կարիքավոր թե բավարարված, իր հողի վրա թե օտարության մեջ, իր ազգային գաղափարախոսությամբ տոգորված հայը հոգով, մտքով և վարքով ձգտեց պաշտպանել, պահպանել ու նաև ծաղկեցնել իր ազգային ինքնությունն ու Աստվածապատգամ գոյությունը:

* * *

36. Հայ Ազգային Գաղափարախոսության ընթերցմամբ, եթե հայն իր Աստվածատուր գոյությունը հավատարմությամբ պահպանի ու զարգացնի թե՛ հայրենիքի մեջ և թե՛ հայրենագուրկ պայմաններում, ապա Աստված անպայման կշնորհի նրան նաև ազատ, անկախ, ապահով ու բարգավաճ ազգապետություն:

* * *

37. Ճշմարիտ տոհմիկ, հարազատ ու փորձված Հայ Ազգային Գաղափարախոսության ճանաչումը, ընդունումը և դրա չափանիշներով ապրելը որքան արագ, կատարյալ ու համընդհանուր դառնան հայ իրականության մեջ, այնքան շուտ, հիմնավոր ու համապարփակորեն կլուծվեն թե՛ Հայաստանի և թե՛ հայության ամեն տեսակի ճգնաժամային և ընդհանրապես բնականոն կյանքը խոչընդոտող խնդիրները: Հայաստանը կհասնի աշխարհում ամենաբարձր նվաճումների մակարդակին, և հայությունը կիրականացնի իր ամենանվիրական իղձերը:

* * *

38. Ազգային ճշմարիտ գաղափարների զորությամբ և ղեկավարների ու առաջնորդների կողմից դրանց կիրառման անձնական օրինակով պետք է ղեկավարվի մեր ազգը... Գաղափարներ, որոնք մարդկային-ազգային են և բխում ու հիմնված են մեր հավատքի վրա՝ Ավետարանով և Խաչով: Դրանց բարոյական արժեքներով ապրված կյանքի օրինակը նոր հույս, վստահություն և հարազատություն պիտի առաջացնի հայության հատվածների ու խավերի մեջ զորացնելով, ծաղկեցնելով այդ հատկությունները:

* * *

39. Հայության գործը փրկարար վեհացմամբ և վերելքով է: Իսկ այդ կարող է լինել ազգի և յուրաքանչյուր հայի ծառայելու՝ ինքնամղումով, որի աղբյուրն է հավատքը և դրանից բխող և դրա վրա հիմնված գաղափարը. մեր դեպքում՝ Հայ Ազգային Գաղափարախոսությունը և բարոյականությունը (ըստ հայ տոհմիկ արժեհամակարգի):

* * *

40. Ի՞նչը կարող է կասեցնել, չեզոքացնել և խապառ վերացնել հայ կյանքից՝ բիծության վիրուսը՝ բճությունը, բճության վարակը և դրա ամոթալի՛, խայտառա՛կ ու կործանարար հետևանքները, եթե ոչ՝ Հայ Ազգային Գաղափարախոսությունը:

* * *

41. Գաղափարները ղեկավարում են աշխարհը և բարձրացնում կամ խորտակում են կյանքը՝ կախված ինչ ակոսներից են բխում դրանք::

* * *

42. Գաղափարը ուժ, եռանդ, շարժում է առաջացնում և բարձրացնում է: Բայց գաղափարը նաև անկման է տանում, եթե բարուց, բարիով չէ և բարի նպատակի չի ծառայում:

* * *

43. Հավատքն է, որ կենարար գաղափար և գաղափարախոսություն է ծնում ու այն պահում է կենսունակ, ստեղծագործ, կառուցողական և բարձրացնող: Սակայն գաղափարը, գաղափարախոսությունը չի՝ կարող հավատք ծնել, ստեղծել, այլ կենսագործվում է այդ հավատքով՝ հավատքի համար:

* * *

44. Կա նաև գաղափար՝ չար, որից ծնվում է նպատակ չար և տարբեր միջոցներով գործադրում է չարիք, որը ոչ միշտ է տեսանելի՝ գոնե սկզբում:

* * *

45. Հայի հիմնական, էական հատկությունը եղել է ու անպայման պետք է շարունակի լինել Աստուծո հանդեպ հավատարմությունը. այն է՝ հավատքի ապրում Ավետարանով և Խաչով, Աստուծո պատգամներով, հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ ու ըստ այնմ՝ բարոյականությամբ և կենցաղավարությամբ, ապրելակերպով:

* * *

46. Հայ Ազգային Գաղափարախոսության հիրավի՛ ճանաչման, ընդունման և կյանքում ապրումի վերածման միջոցով մեզ շրջապատող կործանարար մթնոլորտը մենք կարող ենք չեզոքացնել և պաշտպանվել՝ վերակերտելով մեր Հայկյան տոհմիկ կերպարը, ի զորու և արժանի դառնալու համար ազգային պետական կյանքի բարձրագույն վերելքի՝ ներկա ու ապագա բոլոր ժամանակներում:

Գլուխ 3-րդ

Հայկականության

շունչը, կորիզն ու արմատը



1. Համաձայն Սուրբ Վարդանանց հավատամքի՝ վախը թերահավատության նշան է, և մեր նախնիք մեզ ասել են, որ իրենք վաղուց վանել էին իրենցից թերահավատությունը, հետևապես և վախը...

Այսօր մենք, որպես մեր նախնյաց հարազատ սերունդ, խնդիր դնում ենք և ջանքում ենք մեր միջից վերացնել թերահավատությունը, հետևապես և վախը, որը մինչև չեզոքացման աստիճան նվազեցնում է մեր ժառանգությունը ստացած շատ դրական հատկությունների, կենսունակությունը և դրանց կիրառությունը՝ սրբվելու, մաքրվելու, զորանալու և մեզ ու մեր երեխաների, թոռների, սերունդների համար Սուրբ Հայաստան կերտելու, թե՛ ուժն ու կարողությունը և թե՛ դրա համար հոգևոր նախանձախնդրությունը, պարտաճանաչությունը:

* * *

2. Հայ ազգի համար Աստուծո հավատքը Հիսուս Քրիստոսի Ավետարանի հավատքն է՝ Վարդանանց անմահության և մեր այսօրվա գոյության աղբյուրը, այդ աղբյուրը տվել է և կրկին կարող է Աստվածահաճո, արժանապատիվ կյանք տալ մեզ. այդ աղբյուրում ցողված դրոշմ է, որ կարող է մեզ առաջնորդել՝ կերտելու մեր իրապես ազատ, ապահով ու բարգավաճ, Սուրբ ազգապետությունը, որը հօգուտ նաև մարդկության ու ի փառս Սուրբ Երրորդության:

* * *

3. Սուրբ Գրիգոր Լուսավորչի և Սուրբ Տրդատ Մեծ արքայի՝ Աստուծո առաջ կատարած Ուխտի համաձայն՝ հայությունը պարտավոր է սուրբ ազգապետություն ստեղծել ու պահպանել, որտեղ չի թուլատրվում, որ մոլախոտը խեղդի, կասեցնի իր անդաստանի՝ Աստվածատուր ազգային գոյության կենսունակությունն ու կենսատվությունը... Այս է ցուցանում Սուրբ Գրիգոր Լուսավորչի և Սուրբ Տրդատ Մեծի ազգակերտ ու պետականակերտ հոգեբուխ Սուրբ Ուխտը Աստուծո հետ, ՈՐՆ ԱՆԱՆՑ է:

* * *

4. Ազգը փորձաքարն է հավիտենական կյանքի ուղու: Հայերի համար հավիտենական կյանքի անցագրերը հայկական դրոշմ ունեն, որ անհնար է զեղծել՝ առանց հարվածի տակ դնելու հայի հավիտենական կյանքին արժանապալու հնարավորությունը:

* * *

5. Այսօրվա մեր՝ մեծ մասամբ թերահավատ վիճակը ոչ միայն նսեմացնում, այլև ավելին՝ ի չիք է դարձնում սուրբ երախտիքը մեր ամբողջ պատմության միլիոնավոր նահատակների ու այսօր նրանց կեցվածքը ժառանգած հազվագյուտ ընտրյալների:

* * *

6. Հայ իրականության մեջ մնում է, որ յուրաքանչյուրը քննի իրեն, և եթե իր ազգային գիտակցությունը և Աստուծո առաջ խիղճը թելադրում են իրեն, որ ինքը պարտավոր է և կարող է ազգային վերածննդի ռահվիրաներից մեկը լինել, հավատարիմ մնալով Վարդանանց Անմահության հավերժական Ուխտին, ապա թող վերափոխի իրեն և փնտրի իր նմաններին հայ ազգի վերածննդի համար՝ Աստուծո օգնությամբ:

* * *

7. Հայ ազգի ու հայրենիք Հայաստանի փրկության, ամրապնդման զորացման և հարատև վերելքի միակ գրավական Հիսուս Քրիստոսի հավատքի վերահաստատման Աստվածատուր շնորհին արժանանալու համար անհրաժեշտ է պարզաբանելու համայն հայության իրազեկելն է իր անելիքներն ու չանելիքները և ըստ այնմ ապրելն ու գործելը՝ կյանքի բոլոր բնագավառներում:

* * *

8. Հայ ազգը փառավորվել է, երբ իր որդիների ազգային ծառայության պարտաճանաչությունն ու պատրաստակամությունը բխել են նրանց հավատքից, արմատավորված են եղել նրանց նկարագրում և կազմել նրանց էության հոգևոր ու բարոյական հենքը:

* * *

9. Ներկայիս հայ իրականությունում հարկ է ազգային տոհմիկ նկարագրի համաձայն որոշակիորեն ձևակերպել, սահմանել հայ քրիստոնյա մարդու և մասնավորապես հայ քրիստոնյա ղեկավարի նմուշ-օրինակը՝ որպեսզի դրա չափանիշներով կատարվի բոլոր աստիճանների պատասխանատվությամբ հայ ազգի աշխարհիկ ու հոգևոր ղեկավարների ընտրությունը՝ նաև որպես ազգի ազնվականություն:

* * *

10. Հայ ազգը, Հայաստանը քրիստոնեորեն ասպետականացած կյանքի ապրումով կարող է քրիստոսափառ լույս տարածել թե՛ իր բարեկամների և թե՛ իր հակառակորդների վրա:

Աստուծո և մարդկության հանդեպ ազգովի ծառայության ինչ փառավոր առաքելություն...

* * *

11. Մարդու որակով է պայմանավորվում մարդկային կյանքի որակը: Հայի որակով էլ որոշվում են հայկականության ու հայրենիք Հայաստանի ինչ լինելը:

* * *

12. Ինչպե՞ս հարթել անձնական կյանքի և Հայության ու Հայոց աշխարհի խորդուբորդները, անհարթությունները, դուրս թափել աղբը, ամրացնել ճեղքերը, լցնել փոսերը: Ի՞նչ միջոցներով և ինչպիսի՞ հերթականությամբ է նպատակահարմար այդ անելը: Եվ եթե դա չարվի, ինչպիսի՞ն կլինի մեր ազգի, հայրենիք Հայաստանի և պետության վիճակը՝ գոյության իմաստով:

Այս հարցադրումներին պատասխանների ստացումն ազգային-պետական կենսական խնդիր է և հայության հոգևոր ու աշխարհիկ առաջնորդների հրատապ պարտականությունը: Թե ո՞ւմ կողմից, ե՞րբ ու ինչպե՞ս պիտի հիշեցվի այդ պարտականությունը, հարց է, որը վերաբերում և պարտավորեցվում է յուրաքանչյուր հայի:

* * *

13. Աստված 17 դար առաջ հայի մարդկային էությանն ավելի մե՛ծ ազատություն տվեց՝ տնօրինելու իր կյանքը ներկայում և հավիտյանս՝ Իր Սուրբ Հոգով լուսավորելով հայի հոգին ու միտքը: Բայց շատերի պես հայը ևս միշտ չէ, որ քայլեց այդ լույսով: Հատկապես վերջին շուրջ հարյուր հիսուն տարիներին նա սկսեց գերադասել խավարը և աստիճանաբար գերի դառնալ խավարին...

Այժմ հարկ է՝ ազատագրվել այդ խավարի՛ց, որովհետև դրա մեջ լուսավոր երևացող բոլոր «նվաճումները» փո՛ւչ են և սի՛ն...

* * *

14. Հայ ծնված հայը, չի՛ կարող մարդ լինել, եթե հայ չի՛ մնում: Ինչպես նաև ծնված հայը չի՛ կարող հայ լինել, եթե մարդ չի մնում:

* * *

14ա. Եվ հայ մարդը չի՛ կարող Աստծո երկրային որդի լինել, Աստծուն ծառայել, եթե հայ ազգին, հայրենիք Հայաստանին և հայրենի պետությանը չի ծառայում՝ էապես ու հարատև հետևողականությամբ:

Հավատքով այս գաղափարն ու համոզմունքը հիմնասյուներից են Հայ Ազգային Գաղափարախոսության, որը բխում է և հիմնված է Աստծո հավատքի վրա՝ Ավետարանով և Խաչով:

* * *

15. Հնչել է հայության պատմական նշանակության հոգևոր մեծ հրավերի փողը: Հայոց հոգու պարտքն ու կենսական խնդիրն է՝ այդ հրավերին անսալը:

* * *

16. Մինչև մենք մեզ էապես չճանաչենք և ըստ այնմ չհաստատվենք, չկայանանք և չկազմակերպվենք որպես ազգ, չենք կարող ունենալ կայացած ու կազմակերպված երկիր ու պետություն՝ կենսունակ ու զորեղ այնքան, որ ի վիճակի լինեն պաշտպանվել իրենց իսկ գոյության դեմ ուղղված արտաքին ու ներքին փորձություններից, վտանգներից և քայլել մարդկային ճշմարիտ առաջադիմությանը համընթաց:

* * *

17. Հայությունն ու հայկականությունը հասկանալու համար պայման է՝ Աստուծո հավատովն ըմբռնել Աստվածությունը...

Իսկ հասկանալու համար, թե ինչ է Հայաստանը, և թե ինչպիսին պետք է լինի այն և հայոց պետականությունն ու պետությունը, հարկ է ըմբռնել, թե ինչ է Խաչը և երկնային Դրախտն ու երկնային Արքայությունը:

* * *

18. Իսկ լինելու համար ճշմարտապես ու իրապես հայ, պետք է լինել երկնային Արքայության երկրային քաղաքացի, ով երկնային Արքայությանը տալիս է իր երկրային տուրքը՝ ծառայելով հայությանը, Հայաստանին և հայոց պետականությանն ու պետությանը:

* * *

19. Աստուծո արարած հայը մարդու այն տեսակն է, որի ազգային կազմավորումը կատարվել է Հայկ Նահապետի Աստվածաշնորհ ազատասեր ոգով, կերպարով և սրբագործվել է Աստվածորդու հավատքով՝ Սուրբ Թադեոսի, Բարդուղիմեոսի ու Սուրբ Գրիգորի Լուսավորմամբ և Սուրբ Տրդատ արքայի (պետականորեն) Քրիստոսադարձմամբ:

* * *

20. Հայը լավ հայ լինելու համար պետք է լինի լավ մարդ: Եվ հայը լավ մարդ լինելու համար պետք է լինի լավ հայ:

* * *

21. Հայը պետք չէ արևմտացվի, եվրապացվի, ամերիկացվի, ռուսանա, դառնա չին, պարսիկ, վրացի կամ՝ թուրք: Արևմտականանա, եվրոպականանա կամ ինչ որ այլ բան դառնա. ձուլվի այլ ազգի մեջ և փոխվի, այլ հայը պետք է հայ մնա, իր անունով, լեզվով, դավանանքով ու ամենայն ինքնությամբ, որ ժառանգել է: Հայը պետք է պարզապես հայ լինի, որպեսզի մա՛րդ մնա՝ երջանի՛կ հայ մարդ՝ այժմ և հավիտյանս հավիտենից:

* * *

22. Հայի իսկական, տոհմիկ կերպարը մեր մեծերի, մեր Սուրբ Հայրերի կերպարն է: Այն կարելի է և պետք է վերակերտենք մեր մեջ՝ նրանց Աստվածաշնորհի հավատքով ու այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, բարոյականությամբ ու ըստ այնմ՝ կենցաղավարությամբ:

* * *

23. Հայ Ազգային Գաղափարախոսության համաձայն՝ կարող է լինել հայ՝ հարազատ՝ իսկական, իրական, այսինքն՝ բովանդակալից հայկականությամբ, և հայ՝ օտարացած, ձևական, այսինքն՝ բովանդակազուրկ հայկականությամբ: Իսկ հայկականությունն Աստվածաստեղծ մարդկային ընտանիքի, ազգային ազնվազարմ տեսակի հայկական բովանդակությունն է:

* * *

24. Հայկականությունն ունի մարդկային ուրույն հոգեկերտվածք, խառնվածք և նկարագիր, որոնք սերում են Արարչագործության սկզբնավորումից:

* * *

25. Հայկականության Աստվածաշնորհի հավատքից առաջացած հոգեղենության ու նրա հավատադրոշմ հոգեկերտվածքից, խառնվածքից և նկարագրից բխող աշխարհընկալման արդյունք են հայկականության տոհմիկ գաղափարականությունն ու բարոյականությունը (բարոյական արժեհամակարգը), որոնք իրենց լեզվամտածողությամբ ձևավորել են հայի տոհմիկ մշակութային զգայնությունը և դրա դրսևորումը:

* * *

26. Աստուծո հանդեպ երկյուղը, սերը և հավատարմությունը հայ ազգի մեջ բնավորվել է Աստվածային հայակերտության հիմքում և դարձել է Հայկ Նահապետի ազատասիրության ժառանգակիրը:

* * *

27. Հայկականության հավատադրոշմ հոգեկերտվածքը, խառնվածքը և նկարագիրը լիակատար ու պատրաստ լինելով՝ ընկալեց Աստվածության խորհուրդներն ու ըմբռնեց Նրա ճշմարտությունը: Որով Քրիստոսի Ավետարանի և Խաչի Աստվածաշնորհի հավատքով հայկականությունը, հաղորդվելով իրական կյանքին, թե՛ր ստացավ որակական թռիչքի...

* * *

28. Հայի վերաբերմունքն իր ազգի և Հայաստանի նկատմամբ համեմատելի է զավակի վերաբերմունքին՝ իր ծնողի և հայրական տան նկատմամբ:

* * *

29. Հայկականությունն Աստվածատուր մարդկային բարձրագույն արժեք է: Սակայն մենք՝ հայերս, արդյո՞ք այն ճանաչում, պատշաճորեն արժևորում ենք ու ըստ այնմ ապրում:

* * *

30. Հայկականությունը եթե կազմում է մեր՝ հայի մարդկային ու դրանով նաև ազգային էությունը, ապա դա նշանակում է, որ մենք՝ հայերս, լավ չենք ճանաչում և չենք գիտակցում, գնահատում մեր մարդկային էությունն ու ազգային արժեքը, քանի որ երկար ժամանակ չէինք ճանաչում հայկականության էությունն ու արժեքը:

* * *

31. Որպեսզի հայությունն ունենա կայացած երկիր, իշխանություն և պետություն, հայությունն ինքը պետք է կայանա որպես ԱԶԳ Տերունական:

* * *

32. Քրիստոնեական հավատքը քանի որ հայ ազգի, հայրենիք Հայաստանի և պետության ու պետականության կայացման, կայունության ու վերելքի արմատն է, ապա գաղափարախոսությունն այդ վերելքի բունն է, և բարոյականությունը՝ ճյուղերը, իսկ ազգային կազմակերպական կառավարումը պտուղն է, որը կարելի է և պետք է պաշտպանել ու վայելել ազգային հավատամքից բխող կենցաղավարությամբ, ապրելակերպով, վերաբերմունքով:

* * *

33. Աստված իր հանդեպ Հայկի հավատարմությամբ ու հավատքով ազատասիրությունն արդարություն համարեց և նրան կարգեց հիմնադիր՝ մարդկության հարազատ ու կարևոր մասնիկ հայ ազգի:

* * *

34. Տարոնական ոգին Հայոց հավատքի ակունքից է, ու այդ հավատքից՝ գաղափարականություն, բարոյականություն ու ազգային ազնիվ, հավատարիմ, նվիրյալ ծառայություն՝ անմահ հոգու պարտքի հավիտենական հատուցման գիտակցումով: Գիտակցում, որը սրբագործվեց և հավերժացավ Վարդանանց նահատակությամբ՝ «վասն հաւատոյ, վասն հայրենեաց. վասն Հիսուսի, վասն Ազգի»:

* * *

35. Տարոնականության ոգուց առաջացած ասպետությունն անանց կոչում է:

Տարոնական ասպետությունը պարունակում է հայ մարդու հոգու պարտքի զգացումը և ազգային գաղափարից բխող գիտակցությունն ու պատասխանատվությունը՝ Աստուծո, մարդկության և հայ ազգի առաջ:

* * *

36. Տարոնական Ասպետությունը Քրիստոնեական հավատքով և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ՝ բարոյական կյանքի ապրում է և իմաստնությամբ ու քաջությամբ՝ նաև հարատև նվիրում ու ծառայություն է հայությանը, Հայաստանին և հայ պետականությանը:

* * *

37. Տարոնական Ոգին գոյացած է Ավետարանի և Խաչի հավատքի հավերժական շնորհից, սրբությունից ու ըստ այնմ՝ բարությունից, իմաստությունից, գիտությունից, արդարամտությունից և քաջազնական նվիրումից, արտահայտված է Աստուծո, ազգի և մարդկության նկատմամբ մնա անսասան, անխախտ սիրով և հաստատագրված՝ Մամիկոնեից Ուխտով:

* * *

38. Տարոնական ոգին Հայկյան տոհմի՝ հայկական, Աստվածաշունչ ոգի է: Տարոնական ոգին նաև համայն հայության հոգեկան կորովի, բարոյական դիմադրողականության և գաղափարական կյանքի ապրումն է՝ հայության ծննդից ի վեր:

* * *

39. Տարոն աշխարհն իր ոգով հայ պետականության գաղափարի հայրն է, իսկ Արարտյան աշխարհն իր ոգով՝ մայրը:

* * *

40. Տարոնական ոգին ապրեցրել է և ապրեցնելու է հայությանը, հայ ազգին՝ մինչև աշխարհի վախճանը և երկնային բնությամբ՝ նոր կյանքի սկիզբը միայն թե մենք հավատարիմ լինենք Ավետարանապատգամ մեր «կոչումին ու ըֆտրությունը»:

* * *

41. Տարոնի, Տարոնականության Աստվածաշունչ ոգին բովանդակում է Հայկյան ազատատենչությամբ հայոց տրված Աստվածաշնորհի հավատքը, որը վերալուսավորվեց ու վերականգնվեց Աստվածորդու մարդացմամբ և հավերժ սրբագործվեց 301 թվականին՝ Աստվածորդուն պետականորեն դավանմամբ:

* * *

42. Տարոնական ոգուն առաջնորդում է Աստվածորդին՝ Իր Խաչի լույսով, լուսավորությամբ և Ավետարանի իմաստությամբ ու գիտությամբ:

* * *

43. Տարոնական ոգին, որ Տարոնականությունն է, նաև հայության Հայկյան հոգեբարոյական և գաղափարական վարակամերժ կարողությունն է, որ գործել և դեռ անդուլ գործում է միշտ ընդդեմ Բելի՝ չարի, ստրկամտության, նյութապաշտության և բուժում է դրանցով վարակվածներին:

* * *

44. Տարոնական Ոգին միշտ, ամենուր և բոլոր պայմաններում հայ տոհմիկ ինքնության պահպանման ու դրան հարատև ուժ, կարողություն, քաջություն և դիմացկունություն հաղորդող Հայ Ազգային Գաղափարախոսությունն է արտահայտում:

* * *

45. Տարոնական Ոգին Ազգի կենսունակության, ստեղծագործության և պետականակերտության աղբյուր է՝ հավատքի իմաստությամբ, կամքով և զորությամբ:

* * *

46. Տարոնական Ոգին Հայկյան, Մամիկոնյան և Ֆիդայական Քրիստոսաշնորհ ազատասիրություն է, որն անխառն է հավատքով, մաքուր է բարոյականությամբ և հարազատ է գաղափարականությամբ: Այն ունենալու համար հայը պետք է այդպիսին լինի, նույնպես և հայությունը:

* * *

47. Աստվածահաճո է, որ հայությունն անհապաղ ձեռնարկի Տարոնի առանձնահատուկ ոգով, տոհմիկ հայկականության կերպարի վերականգնման, վերահաստատման գործն ու նաև դրանց համապատասխան՝ ձեռնարկի հայագիտության դրսևորումներով կրթության, մշակույթի, արվեստի, հասարակական հարաբերությունների ու կենցաղավարության դրույթների Տարոնական հայկականության հավատարիմ վերականգնումը:

* * *

48. Մարդկային հայկականության գործունը կենսականորեն անհրաժեշտ է հայի կյանքում՝ ազնվությունը բարձրագույն մակարդակի հասնող ապրում դարձնելու համար:

* * *

49. Մարդկային ցեղի մեջ հայ ընտանիքի էության ամենաբնորոշ հատկանիշն այն է, որ իր՝ հայի էությունը, ստեղծված օրից, շաղախված է Աստվածաշնորհ Հավատքի իմաստությամբ և գիտությամբ:

* * *

50. Հայության և Հայաստանի հին ու նոր վայրընթացների պատճառը դրսերում փնտրելու փոխարեն (գոնե դրան զուգահեռ)՝ փնտրենք մեր մեջ: Փնտրենք մեր հոգևոր, գաղափարական և բարոյական իմունիտետի՝ վարակամերժ կարողության տկարացման, նվազեցման և գուցե նաև կորստի մեջ:

* * *

51. Պատմության լուսավոր էջերը գրվում են այն մարդկանց կողմից, ովքեր հավատարիմ են Աստծուն՝ Արարիչ Հորը և հասկանում, կատարում ու ապրում են Նրա պատգամներով:

* * *

52. Հայ Ազգային հավատք, գաղափար և բարոյականություն եռամիասնությունը հայության հոգին է. առանց այդ եռամիասնության հայն ու հայությունը, դառնալով հոգեղենազուրկ ու հոգեզուրկ, ի՞նչ նվաճում էլ ունենան, այն կլինի անկենսունակ, անպտղաբեր՝ ունայն...

* * *

53. Հայրենիքից չի կարելի հեռանալ՝ լքելով այն անտարբեր ու անվերադարձ, որովհետև հայրենիքն Աստվածատուր է, Աստվածապարզ: Իսկ ինչը որ Աստված է տվել, չի կարելի անտեսել, մերժել և կամ ուրանալ, ինչ էլ լինի պատճառը:

* * *

54. Հայը չի՛ կարող ազգային իմաստով գաղափարականանալ, այսինքն՝ ճանաչել, ընդունել ու ապրել Հայ Ազգային Գաղափարախոսությանը, եթե չի հավատում Աստծուն՝ Հիսուս Բրիստոսի Ավետարանով և Խաչով:

* * *

55. Հայ ճշմարիտ ազգային գաղափարախոսությանն անհաղորդ ու զուրկ մնացած հայն անկայուն ու անկենսունակ է հայ ազգի, Հայաստան հայրենիքի և հայ պետականության ու պետության համար:

* * *

56. Հավատքի, Հայ Ազգային Գաղափարախոսության ու ազգային բարոյական արժեհամակարգի ապրումով հայն անմահանում է: Այդպիսով, «մահ իմացյալ՝ անմահությունն» իրագործվում է, որովհետև հայից գոհանում է Աստված:

* * *

57. Հայը, որպեսզի մարդ լինի, պետք է հայ մնա՝ իր ազգային հավատքով, գաղափարով, բարոյականությամբ ու նաև լեզվով ու մշակույթով:

* * *

58. Խիղճը հսկում է, որ փորձությունների ազդեցությամբ հայը չձեռվի իր մարդկային-ազգային պարտականությունները կատարելուց և չդադարի հայ լինելուց՝ իր նախնյաց հոգիների առաջ, իր որդիների և սերունդների առաջ ու ամենաէականը՝ Աստուծո առաջ: Եվ չկորցնի իր հոգին (կյանքը)՝ հավիտյանս:

* * *

59. Հայ ազգի կենսական հարցերի հարցերը որպեսզի լուծվեն, խնդիրների խնդիրները որպեսզի կատարվեն, անխախտ պայման է, նախքան քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, պաշտպանական ու այլ միջոցների դիմելը, սրբանալ՝ հավատարմությամբ, մեր ազգի Աստվածաշնորհի հավատքին:

* * *

60. Մենք կորցնում էինք Հայ Ազգային գաղափարախոսության հետ բարոյականությունը, հետևապես և հայ ազգային ինքնագիտակցությամբ հետևողական ու անկեղծ նվիրումը, որովհետև տկարանում էինք հոգեղենությամբ: Իսկ դա տեղի էր ունենում, որովհետև «աշխարհին» էր մեզ հաղթում, այլ ոչ թե մենք՝ «աշխարհին»: Իսկ դա էլ տեղի էր ունենում, որովհետև Խաչը մեզ վրա ծանր էր գալիս, քանի որ հեռանում էինք Հիսուսից: Մի բան, որ շարունակվում է և այսօր...

* * *

61. Աշխարհիկ հերոսությունը ֆիզիկական գեների ու աշխարհիկ ավանդույթների արդյունք է: Իսկ հոգևոր, գաղափարական և բարոյական հերոսությունը հոգևոր գեների ու շնորհներով ներքին ապրումների արդյունք է: Դրանցով հայ ազգային տոհմիկ ինքնագիտակցության վերածնունդն ու վերահաստատումը համայն հայության՝ ավագ ու նոր սերունդների սրտերի և մտքերի մեջ դեռ պետք է տեղի ունենա մեր հավատքի գործերով ու Աստվածային շնորհով:

* * *

62. Տարակույս չկա, որ հայությունը և յուրաքանչյուր հայ գիտե, որ մեր ազգային համախոհությունը, միաբանությունն ու միասնությունն ուժ, կարողություն, փրկություն և միաժամանակ զարգացում և վերելք է՝ ամեն ինչում: Ուրեմն էլ ինչո՞ւմն է բանը, ինչու այդ չենք անում հայեր:

* * *

63. Հայ հասարակության՝ մարդկային-ազգային հարազատությունից դեպի օտարը, օտարամոլությունն ու օտարացումը ծրագրված, կազմակերպված և մանրամասնորեն խթանված, քառատրոփ առաջ է գնում՝ շատ անգամ ակնհայտ միջամտությամբ Հայաստանի թե՛ ներսից և թե՛ դրսից:

* * *

64. Հայի գործերում և ընդհանրապես կյանքում հոգեղենությունն արտահայտվում է Աստուծո հավատքով, դրանից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, տոհմիկ բարոյականությամբ ու ըստ այդմ՝ կենցաղավարությամբ: Մեր օրերում ինչ վիճակում որ է հոգեղենությունը, այդ վիճակում է և մնացածը:

Գլուխ 4-րդ

Հայ ազգի և պետության

կայացում, հզորացում, վերելք



1. Առանց հոգևոր իմաստության հայ ազգն անկարող է ունենալ կենսալի ազգային պետություն, քանզի հոգևոր իմաստությանն անհաղորդ ազգն անկարող է ինքնիշխան ու ազատ լինել. սպասավոր՝ թերևս...

* * *

2. Հայ ազգային պետության կառուցման գործընթացի մասնակիցը՝ իբրև իր էության անկապտելի մաս, իբրև միս ու արյուն, պետք է ունենա հավատք՝ հավիտենականության մեջ անմահ հոգու արդար, այսինքն՝ իրեն արժանի հատուցման հանդեպ:

* * *

3. Հայաստանի՝ իրապես ազատությունն ու ինքնիշխանությունը, իրապես անկախությունն ու ժողովրդավարությունը հնարավոր է՝ Հայաստանում նախևառաջ Աստուծո իշխանության հաստատմամբ:

* * *

4. Հայաստանի ֆինանսատնտեսական և դրան առնչվող այլ բնագավառների որևէ կարգի ճգնաժամ վերացնելու համար անհրաժեշտ պայման է՝ վերացնել Հայաստանում թե այլուր՝ հայության հավատամքի և դրանից բխող ու դրա վրա հիմնված ազգային գաղափարի, բարոյական արժեքների, հետևապես և նկարագրային և ինքնագիտակցական ճգնաժամը:

* * *

5. Որտեղի՞ց է սկսվում ազգի ու հայրենիքի անվտանգությանը, կենսունակությանը և վերելքին սպառնացող սահմանագիծը, որը չտեսնելը, չզգաստանալը և այն չանցնելու գերագույն ճիգ չգործադրելը կնշանակի, որ մեր ազգային հոգեբարոյական գոյությունը հոգեկան կուրության և բարոյական ախտահարման է ենթարկված:

* * *

6. Աստուծո իշխանությունը ճանաչած, ընդունած ժողովրդով ու ղեկավարությամբ է, որ Հայաստանում կարող է իրականանալ լիարժեք քաղաքացիական հասարակություն, ժողովրդամենտ օրենսդրություն ու ըստ այնմ՝ պատասխանատու, հաշվետու գործադիր իշխանություն, անկախ, անկաշկանդ ու անկաշառ իրավական գործառնություն, ինչպես և ամեն տեսակի հարաբերություն:

* * *

7. Հայաստան աշխարհում իշխանության վերջին, վերջնական և գերագույն հանգրվանը պետք է դառնա Աստուծո իշխանությունը: Այն այդպես էլ կա՝ ամբողջ աշխարհում, տիեզերքում: Բայց հայրենաբնակ ու արտերկրի հայ մարդիկ էապես կօգտվեն, եթե այդ իշխանությունն ընդունեն ու դրան ծառայեն ինքնաբերիկ կամավորությամբ: Մի բան, որը պետք է իրազեկվի, ուսուցանվի, դաստիարակվի համայն հայության մեջ: Եվ ազգավայել Հայաստանն ու հայությունը կունենան Տեր, Պաշտպան ու Առաջնորդ՝ դեպի փրկություն, դեպի վերելք, դեպի հավերժ երջանկություն:

* * *

8. Աստուծո իշխանությունը ճանաչած, Նրա բացառիկ գերակայությունն ընդունած և նրա հետ Սրբազան Ուխտով դաշնակցած հայկական իշխանությունն է, որ կարող է Հայաստանի իրավ ինքնիշխանությունը, իրավ անկախությունը, իրավ ժողովրդավարությունը, խաղաղությունը, բարեկեցությունը և դեռ շատ ավելին երաշխավորել:

* * *

9. Հայության և Հայաստանի «հավատարիմ հովիվ» ղեկավար ու առաջնորդ դառնալու համար պետք է նախևառաջ ծառա դառնալ: Ուրեմն, պետք է Աստուծո ծառայություն կերպարանավորվի հայ ազգի մեջ...

* * *

10. Հայության բոլոր բնագավառների բոլոր մակարդակներում ոչ թե իշխանաբռնական, այլ իշխանածառայական, Աստվածահաճ ղեկավարություն է պետք:

* * *

11. Հայ ազգն ու Հայաստանը կերտվել, պաշտպանվել, զարգացել ու հարատևել են իրենց զավակների Աստվածապատգամ, անձնուրաց ծառայությամբ:

Հայության և Հայաստանի տեղեկատվական, կրթական և մշակութային առաջնային խնդիր-պարտականությունն այս ճշմարտության իրազեկումն ու ուսուցումն է:

* * *

12. Հայ ազգի պետական իշխանության, հոգևոր իշխանության և կազմակերպված մտավորականության գերագույն պարտականությունը և նրանց գործունեության գնահատման հիմնական չափանիշը պետք է լինի ազգային կյանքի այնպիսի դրվածքի և մթնոլորտի ապահովումը, որում ազնվությունը, վեհանձնությունը, առաքինությունը, անկեղծ նվիրվածությունը և ընդհուպ՝ ասպետությունը քաջալերվում ու խրախուսվում են:

* * *

13. Հայ մարդու, Հայաստանի քաղաքացու հասարակական պատվի, հասարակական վստահության, ինչպես նաև պատասխանատու գործունեության, նյութական հաջողության ու անձնական երջանկության հասնելու հնարավորության աստիճանը պետք է ուղիղ համեմատական լինի նրա ազնիվ, բարի, վեհանձն ու ասպետական զգացումների, մտածելակերպի, վարվելակերպի ու արարքների աստիճանին:

* * *

14. Եթե Հայաստանն ու հայությունը չկարողանան լինել մարդկության առաջին շարքերում՝ ազնվությամբ, առաքինությամբ ու վեհանձնությամբ՝ որպես քրիստոնյա, Աստվածասեր ժողովուրդ, երկիր և պետություն, ապա չեն կարողանա վերապրել ու վերացնել դարերի ընթացքում իրենց ինքնության դեմ կատարված հարվածների հետևանքները և չեն կարողանա դիմագրավել ընթացիկ հոգեբարոյական, գաղափարական և մշակութային «տոտալ» նախահարձակումը, միտված՝ վերաճելու համատարած բարոյական ցեղասպանության՝ այլասերման և կորստաբեր վայրընթաց համաձուլման:

* * *

15. Հայության և Հայաստանի ֆիզիկական գոյությունը և զարգացման ու բարգավաճման հնարավորության մակարդակները կախված են հայության ու Հայաստանի հոգեկան, բարոյական և գաղափարական վիճակից և դրանց պաշտպանվածության, կենսունակության և զորացման կարողականության աստիճանից:

* * *

16. Հայ ազգի, հայոց պետության, Հայաստանի ղեկավարության և մանավանդ Հայրապետության հիմնական նպատակը, քաղաքականությունն ու գործունեությունը նախևառաջ պետք է լինի մեր ազգի ու Հայրենիքի կյանքի իրավ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՈՒՄԸ:

* * *

17. Չի՛ կարող միաբան, միասնական, իր ազգային ինքնությանը հավատարիմ ու պարտականությանը գիտակցք, պատրաստական՝ աշխարհասփյուռ ու կենսունակ հայ ազգ գոյություն ունենալ՝ առանց Քրիստոնեական հավատքի: Դա չի՛ կարող տեղի ունենալ՝ առանց հավատալու և հետևելու Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո ԴԱՎԱՆԱՆՔԻՆ՝ դրա ամենօրյա՝ ապրումով:

* * *

18. 17 դար առաջ Քրիստոսի Սուրբ Ավետարանից բխող Հայաստանեայց Առաքելական Եկեղեցվո՝ ազգի, պետության ու պետականության հոգու, սրտի և գաղափարի մեջ դրոշմված և կյանքի ապրում դարձած ԴԱՎԱՆԱՆՔԻՑ էլ պետք է ծագեն Հայոց վերականգնված պետության զինանշանը, դրոշը, հիմնը, սահմանադրությունն ու օրենքները: Եվ այդ դավանանքի վրա հիմնվեն հայոց ազգային և պետական ներքին ու արտաքին քաղաքականությունը, դիրքորոշումն ու գործունեությունը:

* * *

19. Հայաստանը հայ ազգին Աստուծո՛ւ նվիրած երկիրն է: Հետևապես, հայության համար այն սուրբ է, նվիրական ու հարազատ: Այն պետք է, ըստ այնմ, սնուցել, սրբել, պահել, պահպանել, ու զարգացնել՝ թե՛ ֆիզիկապես, նյութապես և թե՛ մանավանդ հոգեպես, գաղափարապես և բարոյապես:

* * *

20. Յուրաքանչյուր հայի, համայն հայության ու առաջին հերթին հայ իշխանավորների օգտակար գործունեության գլխավոր չափանիշը հայ ազգի կյանքի ապրումի արդյունքն իր Հայր Աստծուն հաճելի, ընդունելի նվեր դարձնելն է:

* * *

21. Հայերի գտնված ամեն մի վայրում և հատկապես Հայաստանի ամբողջ տարածքում Աստված պետք է փառաբանվի մեր զգացմունքներով, խորհուրդներով, խոսքերով ու գործերով: Եվ մեր՝ հայերիս, վերաբերմունքը մեկս մյուսի, մեր ազգի, հայրենիքի ու ամբողջ աշխարհի՝ բարեկամների կամ ոչ բարեկամների նկատմամբ, պետք է լինի քրիստոնեական, Աստվածահաճո:

* * *

22. ԽԱԶԸ միշտ պետք է լինի մեր դրոշի և զինանշանի հետ՝ որպես խորհրդանշան ազգի, պետականության ու պետության հոգևոր իմաստության, հոգևոր հավատարմության, հոգևոր զորության ու ամենայն պաշտպանվածության խավարից՝ մեր անձնական, ազգային ու համաշխարհային կոռումպացվածությունից: Ու նաև պետք է լինի խորհրդանշան՝ մեր հոգևոր, գաղափարական և բարոյական ինքնության ինչպես և մեր Աստվածաշնորհի Հավատքի, Հույսի և Սիրո հաստատության:

* * *

23. Ո՞րն է արդար. լինի հարուստ, զորեղ և զարգացած անհատ հայերի տկար, աղքատ և հետամնաց ազգ ու հայրենի՞ք, թե՞ լինի ուխտյալ, հավատավոր, գաղափարական, ազնիվ հայերի զորեղ, զարգացած, կենսունակ և հարուստ ազգ ու հայրենիք:

Հարկ կա՞ այդ մասին քվեարկել, թե՞ պարզ ու հստակ է, թե որն է արդար: Իսկ եթե գիտենք ճիշտն ու արդարը, ինչո՞ւ ենք հապաղում...

* * *

24. Հայը պիտի ազնվամա, զարգանա և զորանա՝ զարգացնելով, զորացնելով և հարստացնելով իր ազգն ու հայրենիքը: Այդպիսի ազգն ու հայրենիքը յուրաքանչյուր հայի ապահովության ու երջանկության գրավականն է, երաշխիքն է ու հավերժական լուսավոր կյանքի նախադրյալը, նախադուռ հանգրվանը:

* * *

25. Ազգային-պետական էական կենսագործումներ կարող են կատարել քրիստոնեական հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ տոգորված հայն ու հայությունը: Դրանով նրանք կհամակվեն համապատասխան բարոյականությամբ ու ասպրելակերպով. երկնային օրինաչափ նախապայման՝ անհատական ու ազգային գոյության և վերելքի:

* * *

26. Ազգն ու Հայաստանը փեթակն են, յուրաքանչյուր հայը՝ մեղուն, որ աշխարհի քաղնազան ծաղիկների նեկտարից բերում է փեթակ: Բերում է որպես իր էության խնդիր-պարտականության կատարում՝ իր հավատքի ու այդ հավատքից բխող գաղափարի մղումով: Հայի համար իր էության խնդիր-պարտականության կատարումը, որով և իր կյանքի իմաստավորումը՝ հավերժացմամբ իր կյանքի, լինում է հավատքի հոգևոր ու իր ազգային գաղափարախոսության գիտակցական մղումով ու ըստ այնմ ապրելով, գործելով:

* * *

27. Ինչի՞ն է դավանում մեր ազգը, ո՞րն է նրա հավատամքը: Ազգի հավատամքը և դրանով ապրելու կարևորությունը ծանոթ են հայությանը: Այդ թվում՝ ազգի ղեկավարությանը, իշխանություններին, հասարակական ու քաղաքական կառույցներին, մտավորականությանը և նոր սերնդին: Եթե ո՛չ, կամ եթե այն թերի է, դրա հետևանքը կարող է մինչև համազգային կորստի տանել:

* * *

28. Մի՞թե առանց հավատքի, դավանանքի, հավատամքի կարող ենք կենսունակ, մրցունակ ու դիմակայուն ազգ լինել: Առանց դրանց հստակ ըմբռնման, ըստ այնմ՝ լիարժեք ապրումի և համապատասխան կազմակերպական կառավարում ունենալու, մի՞թե կարող ենք կենսունակ, ստեղծագործ, ապահով ու բարգավաճ պետություն կառուցել...

* * *

29. Հայ ազգը, Հայաստանը պետք է վերափոխվեն, պետք է փոխեն ներկայիս ընթացքը և կատարելագործվեն: Դրա համար մեկ և միայն մեկ կարելիություն կա՝ Աստուծո հավատքը՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով և Խաչով: Եթե դրանցով հայությունն ու Հայաստանը չփոխվեն, չկատարելագործվեն և չվերածնվեն, կկորչեն, ու հայը հոգով պարտական կմնա և թերի՝ Աստուծո առաջ:

* * *

30. Հայոց պետության կառուցումը, կայացումը և վերելքը նախևառաջ պահանջում են իմաստություն, ազնվություն և նվիրում: Այն սկսվում է Աստուծո հանդեպ երկյուղից ու ամբողջանում է Աստուծո հավատքով, հույսով, սիրով՝ կյանքի Աստվածահաճո ապրումով:

* * *

31. Սրբություն. սրբացում՝ անձի, ազգի ու հայրենիքի՝ պետության և պետականության: Այս է հայոց փրկության, վերելքի ու երջանկության ճանապարհը: Սրան դեմ է չարը՝ հանձին մամոնայի (նյութապաշտության, փառասիրության, հեշտասիրության և մասամբ նոցին), որին եթե պարտվես, տրվես ու ծառայես, կորստյան կմատնվես՝ անձնապես ու ազգովին:

* * *

32. Հայոց հոգևոր ու աշխարհիկ ղեկավարությունը չի՝ կարող մամոնային ծառայել, եթե՝ մեր ազգի ու հայրենիքի գոյատևման, զարգացման ու բարգավաճման գործին պիտի ծառայեն:

* * *

33. Սթափվել է պետք ազգովին. սթափվել, զղջալ, խոստովանել, մաքրվել, փոխվել, ուղղվել, նորոգվել և սրբանալ, քանզի Սուրբ Լուսավորչի, Սուրբ Մաշտոցի և Սուրբ Վարդանանց Սուրբ ազգն այդպիսով միայն կկարողանա կերտել և պահել Սուրբ Հայրենիք, Սուրբ Եկեղեցի և Հայոց Սուրբ պետականություն ու պետություն՝ զերծ ու անպարտելի՝ ամեն տեսակի փորձանքներից, փորձություններից և կոռումպացումից:

* * *

34. Տնտեսության զարգացում: Ներդրումների աճ: Աշխատատեղերի ու աշխատավարձերի ավելացում: Սոցիալ-տնտեսական վերելք: Լիարժեք անկախություն: Հայ դատի պաշտպանություն: Ազգային իղձերի իրագործում... Բոլոր-բոլորը սկսվում են մենք մեզ ճանաչելուց և մենք՝ իսկապես մենք լինելուց՝ մեր Սուրբ Եկեղեցվո 17 դարյա Քրիստոսապարզ Լույսի Ուխտով...

* * *

35. 1700-ամյակի խորհուրդը կոչում է մեզ՝ վերադառնալ դեպի Լույս՝ դեպի Կյանք, որով և կատարյալ երջանկություն: Դրա համար ազգի պետականորեն քրիստոնեացման Լույսի իմաստությունը, կորովն ու զորությունը պետք է վերականգնվեն և կիրառվեն հայ կյանքի բոլոր բնագավառներում՝ բոլոր նպատակների իրագործումներում:

* * *

36. Հայ ազգի ու երկրի գոյապահպանումն ու զարգացումը պահանջում են նախևառաջ՝ ազգային հավատավոր, հարազատ և գրագետ մոտեցում: Վերջինիս մեջ մտնում է արհեստավարժությունը, որը հմտությունից բացի՝ ենթադրում է նաև ճշտապահություն և կարգապահություն, որը մեր ուշադրությունից բավականին վրիպել է:

* * *

37. Աստվածային հավերժական նորովի Լույսը մարդկությանը շնորհվեց 2000 տարի առաջ: Այդ լույսը 1700 տարի առաջ ծագեց նաև հայ ազգի, նրա պետականության ու պետական ինքնության մեջ: Այժմ՝ քսանմեկերորդ դարի սկզբին, մենք՝ հայերս, ունենք Մեծ Հրավեր:

Մեր ազգի, պետության և պետականության մեծագույն խնդիր-պարտականությունն է՝ տեսնել, զգալ, հասկանալ, ընդունել այդ հրավերը՝ կատարելով ներկա լինելու՝ Տիրոջ պայմանները. զգեստավորվել հոգեպես, գաղափարապես և բարոյապես՝ արժանանալու համար Սուրբ հրավերքին և վերարժանանալու հավերժական Լույսին:

* * *

38. 21-րդ դարասկզբի մեր ազգային և պետական գոյության գերխնդիրը հոգևոր վերազարթոնքն է, որով կարժանանանք և կկարողանանք վերագտնել 1700 տարի առաջ մեր նախահայրերին շնորհված Լույսի իմաստությունն ու զորությունը՝ որպես Ազգային Սուրբ ժառանգություն, որով և հնարավոր կլինի լուծել բոլոր մեր խնդիրները, հաղթահարել բոլոր փորձությունները, դժվարություններն ու վտանգները և հաստատվել՝ որպես Աստուծո Սուրբ Ազգ, Երկիր և Պետություն:

Հայոց ազգային և պետական բոլոր բնագավառների քաղաքականությունն այս իրողությամբ պետք է նպատակադրվի, ծրագրվի և կիրառվի: Այդ կարող է անել 1700-ամյա քրիստոնեական-պետական Ուխտով տոգորված հայոց հոգևոր ու աշխարհիկ ղեկավարությունը:

* * *

39. Մարդկության պատմության ընթացքում որևէ տեղ, որևէ ժամանակ իրապե՛ս անկախ և կենսունակ պետականություն գոյացել է հավատքով, դրա վրա հիմնված գաղափարով, բարոյականությամբ, ըստ այնմ՝ ապրելակերպով, ինչպես նաև այդ հավատքի հետևողական ու հարատև նվիրումով առաջացած կազմակերպվածությամբ և կարգապահությամբ:

* * *

40. Հայ ազգի և պետության քրիստոնեացման իրողությունը հայության Սուրբ ժառանգությունն է: Դրա օգտաշատությանն արժանանալը հայությունն ու Հայաստանը կդարձնի երկնային աղ՝ ի սրբացումն ազգի, հայրենիքի, պետության, նաև հօգուտ մարդկության ու ամենաէականը՝ ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծուն:

* * *

41. Ինչի՞ց են սկսվում Ազգի Սո՛ւրբ վերածնունդը, հայոց պետականության ու պետության լիարժեք կայացումը, և հայրենիքի Հայաստանի հարատև վերելքը, որը հայ ազգի իրապե՛ս ազատ, անկախ, ապահով, բարգավաճ ու երջանիկ կյանքի հաստատման հիմքն է:

Հայ ազգի այդ հիմքի հաստատումը պայմանավորված է նրա ազատ, անկախ, միասնական և հմտորեն գործելու բարձր աստիճանով, որը պատճառ և հետևանք է լինելու Հա-

յաստանի վերակերտման՝ որպես համայն հայության հայրենիք՝ համայն հայության մասնակցությամբ՝ կենսունակ, մրցունակ ու ապահով պետության կայացմամբ, իսկ այդպիսի պետության կառուցման անխախտ նախապայմանն ազգի հոգեկան, բարոյական, գաղափարական և գիտակցական վերածնունդն ու զարթոնքն է:

* * *

42. Հայոց պետության հոգեղենացումը նախապայմանն է հայոց հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների աճի որակի, որն անհրաժեշտ է մեր հայրենիք Հայաստանի զարգացման, բարգավաճման և դրանց երաշխիք եղող հոգեկան Գաղափարական ու բարոյական վերելքի համար:

* * *

43. Արդյոք կորցնո՞ւմ ենք հարաբերությունների որակը՝ հայ կյանքում, համը, իմաստն ու բերկրանքը՝ մեր ընտանեկան հարաբերություններում, մեր ընկերական շրջանակներում և մեր ընկերային ու հասարակական կյանքում: Իսկ նոր սկսվող ու կազմավորվող մեր պետության կյանքում ինչպիսի՞ն են քաղաքական ու հասարակական հարաբերությունները, հարցեր, որ պահանջում են լուրջ մտածում ու ըստ այնմ՝ ջանքեր և գործունեություն:

* * *

44. Եթե մենք մեր ազգային համընդհանուր կյանքում մեր հարաբերությունների որակը չբարձրացնենք քրիստոնեական հավատքի՝ մեր Սուրբ Հայրերի ավանդած ժառանգության մակարդակին, ապա մեր ազգային-պետական ու նաև անձնական և հանրային կյանքը կամլանա, ի վերջո մոլորվելով՝ դեպի ճահճունք:

* * *

45. Հայոց ազգային կյանքի անլացումը կնշանակի, որ Աստուծո կողմից մեզ պարգևած խղճի ու արժանապատվության, բարության և բարոյականության զգացումը, ըմբռնումն ու գնահատումը վարակված, անզգայացած, բթացած են փաստացի աստվածամեծության՝ նյութապաշտության ախտով, որը մահ է, վախճանն է գոյի՝ նախ անձի, ազգի և դրանցով էլ՝ մարդկության:

Ձարթնի՛ր, սթափվի՛ր, բարձրացի՛ր մա՛րդ, հա՛յ մարդ:

* * *

46. Հայոց և Հայաստանի բոլոր բնագավառների հաղթանակների նախապայմանն ու գրավականը՝

- ազգային, հոգեկան, գաղափարական և բարոյական վերազարթոնքը, դրա վրա հիմնված՝

- ազգային ինքնագիտակցությունը, և դրանցից բխող՝

- ազգային քաղաքացիական, պետականամետ, պարտաճանաչ պատրաստականությունն է:

* * *

47. Պատմական արդի փուլում հայ ազգային կազմակերպական կառավարման մեծագույն նվաճումը կլինի համայն հայության ընդգրկումն Ազգային Պատկանելիության մեկ կառույցի մեջ՝ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների այնպիսի սկզբունքների նշումով, որոնց կիրառումը կառաջացնի համահայկական պետականություն, որը նշանակում է հայ փաստացի ամենատարած պետության գոյություն:

* * *

48. Չկան և չեն կարող լինել Հայաստան-Սփյուռք հարաբերություններ, համագործակցություն, փոխադարձ օգնություն և այլն, որովհետև չկա և չի կարող լինել սփյուռք՝ որպես առանձին կողմ, առանձին ինքնություն, քանի որ հայ ազգը մեկ է, և հայությունը մեկ (լրիվ) ամբողջություն է՝ բաղկացած (մեծամասամբ արտաքին գործոններից առաջացած դեպքերի բերումով) աշխարհագրորեն տարածված հատվածներից, մասերից, որոնք ժամանակավոր ձև ու բնույթ ունեն:

* * *

49. Քանի որ հայությունը մեկ է, ապա հայ ազգի կազմակերպական կառավարումը ևս պետք է լինի մեկ՝ ընդգրկելով հայության բոլոր հատվածները, մասերը՝ անկախ որևէ արտաքին պայմանից կամ դրությունից:

* * *

50. Հայկական Սփյուռքը՝ որպես առանձին ինքնություն օտարածին է ու արհեստականորեն ստեղծված հետևապես և վնասակար է, քանի որ հակառակ է մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ ապագա բանաձևման թե՛ գաղափարին, թե՛ փաստացի իրականությանը և թե՛ այդ ուղղությամբ ջանքերին, որոնք պետք է հայությունը և Հայաստանն անպայման կատարեն:

* * *

51. Փաստ է, որ Սփյուռքը Հայաստանի համար «կողմ» չէ, ու հետևապես նրա հետ որպես «կողմ»-ի՝ ցանկացած նպատակադրում, ծրագրավորում և ջանք՝ ապարդյուն է և նույնիսկ վնասակար:

* * *

52. Հայաստան-Սփյուռքի՝ որպես «երկու կողմերի» հասկացությունը սխալ է և վնասակար: Կա և պիտի լինի մեկ հայություն, մեկ ազգ, թեև, ինչպես և հայրենիքը, ինչ-որ ժամանակով բաժանված է տարբեր հատվածների:

* * *

53. Հայաստան-Սփյուռքը՝ որպես կողմերի հասկացություն, չի համապատասխանում ո՛չ գոյություն ունեցող փաստացի իրավիճակին, ո՛չ էլ այն բարվոքելու պահանջներին:

* * *

54. Սովետների հռչակած «Հայաստանը համայն հայության հայրենիքն է» քաղաքական նշանակությամբ կարգախոսն անկախ Հայաստանը պիտի իրականացնի ոչ թե խորհրդային իշխանության նման՝ ձևական, այլ փաստացի:

* * *

55. Մեկ Ազգ, մեկ Հայրենիք, մեկ ապագա գաղափարը պետք է հստակեցվի, պարզաբանվի, ամրապնդվի և դառնա Հայոց պետականության և պետության ներքին ու արտաքին քաղաքականության, ինչպես նաև յուրաքանչյուր հայի ազգային-պետական-քաղաքացիական գիտակցության անկյունաքարերից մեկը:

* * *

56. Հայոց ազգային-պետական գոյության և վերելքի անկյունաքարերը, երբ դրվեն հայոց հավատամքի և դրանից բխող և դրա վրա հիմնված գաղափարախոսության ու բարոյականության հիմքին, այնժամ ազգի, հայրենիքի ու պետության իրավիճակը կընդունեն, կկիսեն և, որպես ինքնաբուխ պարտաճանաչությամբ քաղաքացիներ, իրենցը կդարձնեն աշխարհի բոլոր ճշմարիտ հայերը:

* * *

57. Կարգախոսը, թե Հայաստանը համայն հայության հայրենիքն է, մասամբ է համապատասխանում ներկայիս իրականությանը, քանի որ Հայաստանի այս հատվածը, որտեղ կա հայ փաստացի ներկայություն և պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի սոսկ մի հատվածն է:

* * *

58. Ազգի ու հայրենիքի կենսունակորեն կայացման և հարատև ապահովության ու վերելքի համար էական է, որ յուրաքանչյուր հայ, ուր էլ լինի, ինչ էլ լինի, կարողանա հայոց հոգևոր ու աշխարհիկ ղեկավարությանը վստահել, ինչպես ինքն իրեն, և դեռ ավելին՝ ինչպես կվստահեր կհավատար և հայ ազնիվ ու ազնվական ասպետին և վասն Հիսուսի ու վասն հայրենյաց նահատակ սրբերին:

* * *

59. Հայոց կենսունակ գոյապահպանման, զորացման և հարատև վերելքի հոգևոր, գաղափարական ու բարոյական պայքարի մշտահնչուն փողը կոչում է՝ զարթնի՛ր, լա՛ն, առավել՛ ևս հավատա՛, առավել՛ ևս ապավինի՛ր քո Տեր Աստծուն ու ըստ այնմ գործելով, ստեղծագործելով և պայքարելով՝ անպայման կհասնես նպատակիդ:

* * *

60. Այսօր Հայաստանում, ըստ երևույթին, շատ ավելի դեղորայք է գործածվում, քան երբևէ, բայց արդյո՞ք ավելի առողջ ենք...

* * *

61. Հայությունը երբե՞ք այսքան ուսյալներ չի ունեցել, բայց արդյո՞ք ավելի իմաստնացած ենք:

* * *

62. Հայության մեջ երբեք այսքան հարուստներ չեն եղել, բայց ազգն ու հայրենիքն արդյո՞ք հարուստ են:

* * *

63. Նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի, դատաիրավական համակարգի և հայկական պետության համայն պաշտոնեության նստավայրեր-գործավայրերը համապատասխան տաճարներ են, որ զերծ պետք է մնան հոգեկան, բարոյական ու ամեն տեսակի նյութական կոռումպացումից...

* * *

64. Հայությունը գոյատևել է, որովհետև կյանքում խորապես եղել է հավատացյալ՝ հույսով, սիրով, գաղափարով, բարոյականությամբ, աշխատասիրությամբ ու կենցաղավարությամբ: Երբ հայությունը լիովին դադարի այդպիսին լինել, հայությունը չի գոյատևի: Ել չասած՝ զարգացման մասին: Եվ չի՞ գոյատևի՝ անկախ իր այլ ջանքերից և բարեկամների ամեն տեսակի աջակցությունից:

* * *

65. Ակնհայտ է, որ ներկայիս «գլխիվայր հավատամքն ու բարոյականությունը» հարաճունորեն դառնում են մարդկության իշխող ուղղության ընթացքը, որի մեջ, դժբախտաբար, այս կամ այն չափով ու ձևով ներառվում են մեր ազգն ու հայրենիքը, մանավանդ, ափսո՛ս, որ նաև մեր մատաղ սերունդը:

Այս պայմաններում կարելի՞ է հանգիստ քնել և ոչինչ չանել, որ պե՛տք է արվի, եթե մենք մենք ենք:

* * *

66. Հայ իրականությունում բարին, բարերարը և բարի նպատակը, ձգտումն ու գործը պետք է իրազեկվեն ու նաև բարոյապես, կազմակերպորեն և նյութապես խրախուսվեն, պաշտպանվեն ու առաջ մղվեն՝ միշտ ու ամենուր: Բարին, բարիքը հաստատողը և կամ պաշտպանողը պետք է հայ ազգի ու հայրենիքի սերը, հարգանքը և վստահությունը վայելեն՝ դառնալով նոր սերնդի դաստիարակման մնուշ-օրինակ կերպարը:

* * *

67. Հայ իրականության մեջ չարը բնորոշելու, հայտնաբերելու ու անձնական, ընտանեկան, հասարակական և պետական կյանքից, մանավանդ հոգևոր կյանքից, դուրս մղելու համար պետք է զգաստանա, զորանա ու անխոնջ գործի Ազգի Բարին:

* * *

68. Վերադասի անհարգալից, անխիղճ, անօրեն ու նվաստացնող վերաբերմունքը դեպի ենթական առաջին հերթին նսեմացնում է հենց իրեն՝ վերադասին՝ արատավորելով, պատվազրկելով հենց իր կերպարը: Դրանով նա զրկում է իրեն՝ նաև ղեկավարին անհրաժեշտ հատկություններից, որն ազդում է, բացի ենթակայից, նաև ամբողջ ազգի վրա:

* * *

69. Սփյուռքյան մեր եկեղեցական քարոզներում երբեմն ասվում է. «Քրիստոսին հայացուցինք»: Բայց Քրիստոս չի՝ հայանում. Նա արդեն հայ է, ինչպես որ իսլամդաջի է, ռուս, հնդիկ, արաբ, հրեա, ֆրանսիացի... ՄԱՐԴ ու նաև՝ Ա Ս Տ Վ Ա Ծ:

Խնդիրն այն է, որ հայն իրապես Քրիստոսինը դառնա, ինչպես և յուրաքանչյուր մարդ:

* * *

70. Ինչպես որ մեր երկրի սահմաններն են պաշտպանվում, ինչպես որ պետք է պաշտպանվեն մեր տնտեսական, քաղաքական ու այլ շահերը, այնպես էլ հոգին, հոգեկան աշխարհը կարիք ունեն պաշտպանության և պետք է պաշտպանվեն: Դրա բացակայությունը ծնում է ամեն տեսակի չարիք, կարիք ու վտանգ:

* * *

71. Համաձայն Հայ Ազգային Գաղափարախոսության ըմբռնման՝ հայի և հայ ազգային պետության քրիստոնեացման և հայ մարդու ու հայ ազգի գոյության էական իմաստը Աստուծո կամքի և ծրագրի կատարումն է. Աստվածասիրությամբ ապրել՝ Նրա պատգամներով և ընտանիքի ու Ազգի պահպանմամբ ու զարգացմամբ պահպանել և զարգացնել մարդկությունը: Հայ անհատն ու Ազգն այդ իմաստավորմանը կարող են արժանանալ Աստվածաշնորհի սիրով, հավատքով առաջացած հավիտենական կյանքի հույսով:

* * *

72. Աստվածային լուսավորմամբ ճանաչելով Հավիտենական ճշմարտությունը՝ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ, հայ ազգը շնորհ, ուղղություն և կարողություն ստացավ՝ ապրելու ճշմարիտ կյանքով աշխարհում ու հավերժության մեջ:

* * *

73. Փրկության բազմադարյան հավատքով հայ մարդն իմաստնացավ հոգեպես և հավիտենական կյանքի հույսից բխող մտայնությամբ, վարքով և գործով կերտեց ու ապրեց մարդկային իսկական, քրիստոնեական կյանքն՝ իր անձնական, ընտանեկան ու ազգային հարաբերություններում: Արդյունքում՝ շեշտակիորեն ավելացավ Ազգի թե՛ վարակամերժ և թե՛ ստեղծագործ կարողությունն՝ իր գոյության պաշտպանության և զարգացման համար:

* * *

74. Տասնյոթ դար առաջ հայ ազգը, լուսավորվելով Քրիստոսափայլ հավատքով, դարձավ հաղորդակից Աստվածային բնությանն ու խորհուրդներին՝ ստեղծեց հոգևոր ու նյութական կոթողներ և դարձավ մարդկային գիտության ու արվեստների, ինչպես և ազգերի գոյության ու արժանապատվության պահպանման համաշխարհային ջանքերի գործուն մասնակից:

* * *

75. Եթե Հայ իրականության մեջ ճգնաժամ կա, ապա այն միայն Հայաստանի՞ ճգնաժամ է, թե՞ ամբողջ հայության: Նյութականի՞ ճգնաժամ է, թե՞ հոգևորի, բարոյականի, գաղափարի ու մարդկային-ազգային նկարագրի ճգնաժամ: Ըստ ամենայնի, մեր ազգային խղճի և գիտակցության թելադրանքով այդ հարցադրումը պետք է ստանա ճիշտ, ազնիվ ու անհապաղ պատասխան – լուծում:

* * *

76. Հավատա՞ և կփրկվես: Ահա՛ հայության վերելքի դրոշը: Ո՞վ է բարձրացնելու այն: Ո՞ւմ կոչումն ու պարտականությունն է այդ: Ո՞ւմ պետք է մայել, ո՞ւմ հետևել...

* * *

77. Ո՞ւմ ձեռքում է հայության և հայոց երկրի, պետության ու պետականության բախտը: Ո՞վ է, որ իրա՛վ զորություն ու իշխանություն ունի՝ որոշելու հայոց բախտը:

* * *

78. Հզոր երկրների հզորներն անգամ «իմպիչմենտի» (պաշտոնազրկման) են ենթարկվում՝ անբարոյականության, կոռուպցիայի կամ կոռումպացված վերաբերմունքի համար: Իսկ այդպիսի վերաբերմունքի հիմքում, հիմնականում և վերջին հաշվով, անաստվածությունից առաջացած նյութապաշտ անբարոյականությունն է...

* * *

79. Հայ ազգն իր այժմյան ընդհանրական կյանքի ընթացքում արտահայտվող հատկություններով և գործերով պատմության լուսանցքո՞ւմ կամ աղբանոցո՞ւմ է գտնվելու, թե՞ լուսավոր բարձունքի գագաթին՝ կախված է իր հավատքից և հավատքով ապրելուց:

* * *

80. Ի՞նչ վիճակում են կոռուպցիայի հարցում հայ ազգը, Հայաստանը, հայոց հոգևոր և աշխարհիկ կառույցները, հաստատություններն ու դրանց պատասխանատուները: Եվ ի՞նչ վիճակում է ազգի մտավորականությունը և ընդհանրապես հասարակությունը. արդյոք զե՞րծ են կոռումպացումից կամ, այլ կերպ ասած, հիվանդ չե՞ն կոռումպացվածությամբ: Ու եթե հիվանդ են, ապա ի՞նչ աստիճանի:

Այդ հասկանալը լինելով ազգային ախտաճանաչում՝ ըստ այնմ, բուժումն ազգային անվտանգության համապարփակ գերխնդիր է: Որովհետև, եթե ազգը, երկիրը ու պետությունը Աստվածային չափանիշով սահմանն անցած, անբարոյականացած՝ կոռումպացված են, ապա նրանց ապագան ևս համապատասխանելու է այդ վիճակին:

* * *

81. Երկու չարիքից ինչպե՞ս ընտրել փոքրագույնը:

Ժողովրդավարություն, սակայն կեղծորեն ստեղծված, խորթ ու ինքնակա՞լ, թե՞ ամբողջատիրություն, սակայն համաձայնությամբ գործող, ազնիվ ու ազգին հարատևորեն հավատարիմ իշխանապետություն...

* * *

82. Ի՞նչ է կաշառելիությունը: Դա ազգի, երկրի, հասարակության հոգեբարոյական և գաղափարական անբավարարությունից առաջացող ընկերային հիվանդություն է, որ տարածվում է քաղցկեղի նման և ճարակում է ազգային-հասարակական ու պետական օրգանիզմի կենսունակությունն ու վարակամերժ կարողությունը:

* * *

83. Ինչի՞ց է առաջանում կաշառելիությունը. հոգեղենության, գաղափարականության և բարոյականության տկարացումից, նվազեցումից և կամ աղավաղումից, այլասերումից:

* * *

84. Ազգի պետականորեն հավատավորման 1700-ամյա խորհուրդը այսօր պետք է լիցքավորի հայոց հոգիները՝ սկսելու համար Առաքելահիմն Գրիգորյան-Մեսրոպյան հեղափոխության արդիական արշավը՝ դեպի դարեր... Առաջնորդություն է պետք... Ո՞ւր ուղղենք մեր հայացքները:

* * *

85. Մարդկության մասին տարբեր պատմություններ են գրված՝ տարբեր մեկնաբանություններով: Բայց մեկ պատմություն կա բացարձակ ճշմարիտ՝ Աստուծո գրած պատմությունը՝ Իր մեկնաբանությամբ, որ Իր սահմանած օրենքներով ու օրինաչափություններով է կերտվում: Այն ազգը, այն պետությունը, որը դա լավ է հասկանում և այդ օրենքներով ու օրինաչափություններով է ձգտում կերտել իր սեփական պատմությունը սրբությամբ, նա կգտնի իր պատմական երթի փառավոր ուղին:

* * *

86. Հայաստանի քաղաքական կյանքում ընդդիմության գործոնի դերի ամրապնդման, առարկայացման և դրա օգտակարության ավելացման համար անհրաժեշտ է, որ երկրի քաղաքական գործընթացում պահանջ ու ավանդույթ դառնա կառավարման ընդդիմադիր նմանակ՝ ստվերային «կաբինետների» ձևավորումը:

* * *

87. Մամոնան, նրա պաշտամունքն ամեն կողմից տարբեր ձևերով ու միջոցներով հարձակվել են մեր ընտանիքների և մեր ազգի վրա (ինչպես և ամբողջ մարդկության):

Ի՞նչն է մեզ պաշտպանելու, ո՞վ է լինելու մեզ պաշտպան: Ո՞ւմ հետ դաշնակցենք, ումի՞ց օգնություն խնդրենք: Մենք ի՞նչ անենք:

Ազգի համար էական հարցեր, որոնց ճիշտ պատասխանը գտնելուց ու ըստ այնմ գործելուց, ապրելուց է կախված յուրաքանչյուր հայի, նրա սերնդի և ազգի ու հայրենիքի գոյավիճակի ներկան ու ապագան:

* * *

88. Ազգի համապատասխան կազմակերպչական կառավարմամբ ամբողջ ազգի բոլոր բնագավառների ներուժի բացահայտումը, կազմակերպումը, շարունակական զարգացմամբ, հզորացումն ու արդյունավետ կիրառումը կարելի է միայն Հայ Ազգային Գաղափարախոսության հիման վրա մշակված, ընդունված ռազմավարական ու մարտավարական ծրագրերով և ըֆտրված անձնակազմով:

* * *

89. Հայկական ապահով, հզոր, ստեղծագործ, բարգավաճ, արդար, բարեգութ ու մշտապես ծաղկյալ հայրենի պետության կատարյալ քաղաքացի դառնալը պայմանավորված է Աստուծո Արքայության Սուրբ Քաղաքացիության թեկնածությամբ, որին կարժանանանք՝ երկրի վրա կիրառելով Աստուծո Արքայության տեսլականով քաղաքականություն:

Այդ քաղաքականության կիրառման ասպարե՞զը՝

– հայ ընտանիքը, հայոց հայրենիքը և հայոց ազգն է որպես մարդկության հարազատ, արժեքավոր ու կենսատու մասը,

– միջո՞ցը՝ սրբությունն է:

– աղբյու՞րը՝ Հավատքը, Հույսը և Սերը՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով և Խաչով:

* * *

90. Հայության՝ որպես ազգի գոյապահպանումը, զարգացումը և վերելքը պայմանավորված են յուրաքանչյուր հայի ինքնության պահպանմամբ, զորացմամբ ու հարատև զարգացմամբ: Այդ պայմանի ապահովումը միայն ու միայն մեկ աղբյուր ունի՝ հավատք, և դրա վերածումը ապրումի՝ գաղափարականացման միջոցով՝ Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Ավետարանով և Խաչով:

* * *

91. Մարդու որակով է պայմանավորվում մարդկային կյանքի որակը:
Ինչպես և հայի որակով՝ հայության ու նաև Հայաստանի որակը:

* * *

92. Ինչքան բարձր է պաշտոնը, այնքան բարձր է պատասխանատվությունը, ինչքան բարձր է պատասխանատվությունը, այնքան բարձր պետք է լինի ծառայության մակարդակը՝ կոռումպազերծությամբ, ազնվությամբ ու նվիրումով:

* * *

93. Աշխարհիկ ու հոգևոր ղեկավարության, ինչպես և մտավորականության մակարդակը հիմնականում պայմանավորված է ժողովրդի ընդհանուր մակարդակով, եթե ազգը զուրկ է ազնվական դասից:

* * *

94. Արհեստավարժությունը հմտությունից բացի՝ ենթադրում է նաև ճշտապահություն ու կարգապահություն:

* * *

95. Ճիշտ հասկացվելու համար նախ՝ պետք է ճիշտ հասկանալ խոսակցին, և երկրորդ՝ միշտ հիշել, որ խոսակիցը կարող է ավելի ճիշտ լինել:

* * *

96. Հավատքի հատկապես հավաքական ապրումը՝ հավատքը կյանք է դարձնում թե՛ երկրային և թե՛ երկնային:

* * *

97. Ժողովրդավարությունն օրհնյալ է, եթե իրական է:

* * *

98. Ազատության ու արդար իրավունքի համար պայքարը սուրբ է:

* * *

99. Հայրենասիրությունն իմաստավորվում ու արդյունավորվում է հավատի հետևողական և հարատև զորացմամբ ու գործադրմամբ:

* * *

100. Առանց ապագայի՝ չկա կյանք, և առանց կյանքի՝ չկա ապագա:

* * *

101. Խավարի և լույսի պայքարն աշխարհում, ազգերի ու մարդկանց մեջ եղել է, կա ու պիտի լինի: Էական հարց է, թե մարդն ու մարդկությունը, հայն ու հայությունը ո՞ր կողմում են լինելու. դա կախված է հավատքից:

* * *

102. Սրբազան հավատքի նկատմամբ չեզոք ազգ, հասարակություն, պետություն ու նաև անձ չի կարող լինել... Եթե ասվում է, թե չեզոք է, նշանակում է խավարից ապակողմնորոշված, այլասերված՝ չարի թակարդում է:

* * *

103. Իրական ազատությունը կյանք է , և իրական կյանքը՝ ազատություն:

* * *

104. Դժվար է հիմարներին իմաստություն ու անհավատներին ճշմարտություն ապացուցելը:

* * *

105. Մարդ էակի կյանքը որպեսզի իմաստավորվի, պետք է հավատքով բարի նպատակ-խնդիր դրվի, կենսագործվի, արդյունք տա՝ անձի, ըֆտանիքի, ազգի ու նաև մարդկության համար:

* * *

106. Հավատքով գաղափարի զորությամբ և ղեկավարների ու առաջնորդների կողմից դրա կենսագործման սեփական օրինակով պետք է ղեկավարվեն ու առաջնորդվեն հայն ու հայ ազգը...

* * *

107. Ավետարանով և Խաչով մեր հավատքից բխող և դրա վրա հիմնված մարդկային-ազգային մեր գաղափարն ու ըստ այնմ բարոյական արժեքներով ապրվող կյանքի օրինակը հույս, վստահություն ու հարազատություն կառաջացնի հայ ազգի մեջ. կզորացնի, կծաղկեցնի ու կբարձրացնի այն...

* * *

108. Հայ իրականությունում պետք է մեծարվեն, փառաբանվեն և ծառայության կոչվեն հայ քրիստոնյա ասպետական ոգով ու կերպարով անձինք:

* * *

109. Հայ ազգին ծառայելն սկսվում է առաջին հերթին ծառայելով հայության և Հայաստանի ազնվացման նպատակին՝ որպես նրանց զորացման, ապահովության, բարգավաճման և բարձրացման հիմնական նախադրյալ:

* * *

110. Պետք է կայացնել ազգը, որպեսզի կայանա երկիրն ու պետությունը՝ կայուն իշխանությամբ, հուսալի պաշտպանությամբ, զարգացող տնտեսությամբ, մշակույթով, կրթությամբ և ներքին ու արտաքին կարողունակ քաղաքականությամբ և ամենակարևորը՝ հավատքով ու քրիստոնաբուխ սիրո միաբանությամբ, միասնությամբ:

* * *

111. Համայն հայության հայրենիք–տան՝ Հայոց «բերդի» բոլոր կայացումների «շաղախը» հավատքն է, իսկ քարը՝ հավատավոր հայը: Հայոց բերդ-տունը որպեսզի դիմանա ամեն տեսակի քաղաքական ու այլ երկրաշարժներին, պետք է բարձրորակ «ցեմենտով և գրանիտ քարերով» կառուցվի, այլ ոչ թե ցեխով և հում աղյուսի կտորտանքներով...

* * *

112. Մենք՝ այսօրվա հայերս, կարող ենք հասու դառնալ մեր նախնյաց հավատքին և դրա իմաստությանն ու գիտությանը՝ ճանաչելու ճշմարտությունն Աստվածային, որի միջոցով միայն կարելի է ազատ լինել. ազատ մարդ ու ազա՛տ հա՛յ լինել, ազատ հայրենիք և պետություն ունենալ՝ ազատ լինելով ամեն տեսակի հին ու նոր «իզմերի» (մարքսիզմ, լենինիզմ, դարվինիզմ, կապիտալիզմ և այլն) ստրկամտությունից, այսինքն՝ կռապաշտությունից, նյութապաշտությունից ու հավատքով իրական վերելք ապրել՝ կայուն և հարատև:

* * *

113. Մենք ունի՞ց ենք սովորում, ո՞ւմ ենք հետևում: 70 տարի մտրակով ուղեկցվող ու պարտադրվող ստի փոխարեն հիմա էլ «շաքարակալած», տոտալիտար, «փափուկ» ստի՞ն, դրամատիրական ունայնությա՞նն ենք հետևում: Եվ այդ ունայնությունը մեզ մատուցողների՞ց ենք սովորում, նրա՞նց ենք ձգտում նմանվել: Գիտակցո՞ւմ ենք, թե ուր կտանի մեզ այդ ընթացքը:

* * *

113ա. Մարդկությունը կայացել է ազգերի կայացմամբ, իսկ ազգերը կայացել են՝ կառավարվելով ու ապրելով ըստ իրենց մարդկային-ազգային գաղափարախոսության: Նույնպես և հայ ազգը. դարերի ընթացքում, պետականազուրկ վիճակում, երբ ապրել է ըստ իր գաղափարախոսության, որը Հայ Ազգային Գաղափարախոսությունն է՝ բխող և հիմնված Աստուծո հավատքի վրա՝ Ավետարանով և Խաչով, այնժամ իր ընթացքը եղել է ապահով ամենայն հոգեբարոյական մոլորություններից, խեղումներից ու կորուստներից...

* * *

114. Մարդու և մարդկային կյանքի ամենամեծ վտանգներից է նախ՝ նյութական հարստությունը, ապա՝ իշխանությունը, որոնք սպառնում են խեղել մարդու հոգեղենությունը, գաղափարականությունը և բարոյականությունը՝ աճեցնելով նրա մեջ ամբարտավանություն, գոռոզամտություն, փառասիրություն, հեշտամոլություն ու արհամարհանք՝ նախ իր հոգու կյանքի և ընդհանրապես իր մարդկային էության նկատմամբ՝ դեպի անկում և կորուստ:

* * *

115. Մարդու նյութական հարստացումը և իշխանական վերընթացն սպառնում են՝ աճեցնել նրա մեջ այն ամենը, ինչ ատելի է Աստծուն, եթե իրեն տրվածը չծառայեցնի Տվողին՝ որպես Նրա կամքն ու պատգամները հավատարմորեն կատարող իմաստուն տնտես:

* * *

116. Հայ մարդուն այնպիսի՝ նյութական հարստություն է վայել, որը կբարձրացնի իր եղբայր ու քույր հայ մարդուն և իր հայրենիք Հայաստանը: Դա կարող է անել հոգեղենությամբ տոգորված ու հարստացած հայ մարդը:

* * *

117. Հայ մարդը եթե չի՝ սիրում իր ազգը, չի՝ սիրում և Աստծուն: Որովհետև Աստուծո հանդեպ հայ մարդու սերը կյանքի ապրում է դառնում ու իրագործվում սիրելով, հավատալով և ծառայելով հայ ազգին:

* * *

118. Հայի երկրային կյանքն իմաստավորող հավիտենական լուսավոր կյանքին արժանանալու համար պահանջվող քննությունը հաջող հանձնելու պայմանը սիրելն ու ծառայելն է Աստծուն: Իսկ դա հնարավոր է՝ սիրելով և ծառայելով հայ ազգին՝ արդարությամբ, ազնվությամբ, նվիրումով ու նաև հմտությամբ:

* * *

119. Չկա՝ հայ մարդու մարմնավոր կյանքի ավելի մեծ իմաստ, գեղեցկություն ու երջանկություն, քան ծառայելը Աստվածաստեղծ մարդկության հարազատ մասնիկ (հայ ընտանիքներից բաղկացած) հայ ազգին: Դրա նախապայմանն է ամբողջ հոգով, սրտով և զորությամբ սիրելը և ըստ այնմ՝ նվիրումով, հետևողականությամբ ու հմտությամբ ծառայելը հայ ազգին՝ անմահ հոգու պարտքի հավիտենական պատասխանատվությամբ Աստուծո առաջ:

* * *

120. Այո՛, առանց արդարության ազգերի միջև չի՝ կարող լինել խաղաղություն: Առանց արդարության խաղաղությունը գերեզմանային, անկենդան, անկենսունակ խաղաղություն է՝ լի նաև լռելայն հակամարտությամբ, ցավով, տառապանքով ու աներևույթ ավերումներով: Ազգերի միջև արդարությամբ խաղաղության (որով և համագործակցության), հաստատունը պայմանավորված է նաև ճշգրիտ, իրական պատմությամբ. անխարդախ ու չնենգափոխված, գիտական ու անաղարտ պատմությամբ...

* * *

121. Սուրբ ժողովուրդ, սուրբ հայրենիք, սուրբ պետություն. այդպիսի իրականությունն է վայել հայ ազգին, Հայաստան երկրին ու հայոց պետությանը: Իսկ այս կենսաատու վիճակին հասնելու համար, որը գործություն, մեծություն ու երջանկություն է այս աշխարհում, հարկ է, որ յուրաքանչյուր հայի (անկախ սեռից, տարիքից, սոցիալական վիճակից, ապրելավայրից ու քաղաքացիությունից) Աստվածապատգամ նվիրումը, ձգտումը, ջանքն ու նրա գործը լինեն սրբությամբ:

* * *

122. Աստվածակերտ հայ ազգը, նրա Աստվածատուր հայրենիք Հայաստանը, և նրա իշխան ու ծառա Հայոց պետությունը մարդկության մաս հանդիսացող հայության անդաստանն է: Ընկնել մեջն այդ հողի, մնալ այնտեղ և պտղաբերել Տիրոջ համար՝ նշանակում է այդ հողի ու այն պարզևողի հարազատ (անդավաճան) մասնիկը դառնալ:

* * *

123. Նահատակությունը մահ չէ, այլ կյանք: Դրա համար բոլոր ժամանակների Վարդանանք ապրում են ոչ միայն մեր մտապատկերներում, իբրև պատմական ու գրական կերպարներ, այլև ապրում են իրական՝ Հավիտենական կյանքով:

* * *

124. Այսօր մենք՝ սուրբ նահատակաց ժառանգորդներս, որպեսզի արժանի և կարող լինենք վայելել նրանց անանց ժառանգությունը, պայման է, որ ժառանգենք նրանց նահատակության ոգին, գիտակցությունը և սերը:

* * *

125. Ովքեր չեն կորցրել լսողությունը և լսում են ահագանգը, ովքեր չեն կուրացել և տեսնում են կատարյալ վտանգը, պետք է գտնեն միմյանց և պատվար ու բռնեցք կազմեն չարի ամեն տեսակի այլասերող, մահացու վտանգների դեմ:

* * *

126. Եթե հոգեղեն սեր չկա, նշանակում է՝ նահատակություն էլ չկա, և հավատք էլ չկա:

* * *

127. Տասնյոթ դար առաջ հայ ազգն Աստվածաշնորհ քրիստոնեական հավատքի լույսով պետականորեն լուսավորվեց հոգով, մտքով և տեսավ, հասկացավ ու ապրում դարձրեց ԿՅԱՆՔԸ:

* * *

128. Մարդկային ցեղի հայ ընտանիքի էության ամենաբնորոշ ու կարևոր հատկանիշն այն է, որ հայի էությունը, ստեղծված օրից, շաղախված է Աստվածաշնորհի հավատքի իմաստությամբ և գիտությամբ:

* * *

129. Շատ կարևոր է, որ ամեն տեսակի անհաջողությունների պատճառը դրսի գործոնների մեջ փնտրելու փոխարեն (կամ գոնե դրան զուգահեռ)՝ փնտրենք մե՛ր մեջ: Փնտրենք մեր ազգային հոգեբարոյական, որով և գաղափարական իմունիտետի, այսինքն՝ մեր ազգային վարականերժ հատկության և կարողության տկարացման, նվազեցման, գուցե նաև կորստի մեջ:

* * *

130. Հայությունը և մանավանդ Հայոց պետությունը դեռևս չի՝ ստեղծել, մշակել այն հողը, որում կարող է առաջանալ, աճել և պտղաբերել հայոց պետական կառավարման համազգային ծառը՝ Հայ Պետականության (համահայկական ազգային) փաստացի պետական կառավարումը: Մի բան, որ կարող է կենսագործվել հայոց հանրապետության ու հայրապետության համապատասխան ղեկավարության գլխավորությամբ ու համահայկական ջանքերով:

* * *

131. Հայոց համազգային պետական կառավարման պարարտ հողը հայոց հավատամքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ գիտակցված և Հայաստանի պետական՝ այդպիսի իշխանության կողմից ստեղծված և ղեկավարվող կազմակերպական կառավարման համազգային կառույցի առկայությունն է: Այն կարող է ստեղծվել հայոց հոգևոր ու աշխարհիկ բարձրագույն ղեկավարության կողմից՝ Հայաստանի նախագահի նախաձեռնությամբ և համահայկական ընթերցմամբ և աջակցությամբ:

* * *

132. Հայ ազգի գոյության և վերընթացքի հարատևության գրավականը, հիմքը, պայմանը ազգի հայրենասիրությունն է՝ շաղախված գաղափարով՝ Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Ավետարանով և Խաչով:

* * *

133. Յուրաքանչյուր ազգ ունի իր ուրույն, հարազատ պատմական ընթացքը՝ հիմնականում՝ ըստ երկնքում գծված ճանապարհային քարտեզի և մասամբ՝ տվյալ ազգի ներքին իմպերատիվի:

* * *

134. Հայությունը միշտ, ամենուր, ամեն ինչում փաստարկներ ունենալու համար՝ հարկ է, որ կյանքում ըստ այդմ կեցվածք, քաղաքականություն ու ապրում ունենա:

* * *

135. Հոգևոր կյանքը գերիշխող է աշխարհիկ կյանքի նկատմամբ: Հետևապես, երբ հայությունը տոգորվի հավատքի հոգեղենությամբ, այնժամ կավելանա իր աշխարհիկ կյանքի որակական մակարդակը՝ բոլոր ուղղություններով:

* * *

136. Հայ ազգի Աստվածասիրությամբ առաջացած կամեցողության ու ըստ այնմ պետական իմաստուն մտածելակերպի առկայությունը հիմնասյուն է՝ մեր ազգային նվիրական իղձերի կատարման համար: Այն ապահովում է նաև մեր ազգային համընդհանուր անվտանգությունը, խաղաղությունն ու վերելքը:

* * *

137. Աշխարհիկ իմաստով հայության ազգային շահերի պաշտպանության և ընդհանրապես ազգային և պետական գոյության վիճակն ու վտանգվածության աստիճանը ճիշտ և նպատակահարմար է բնորոշել ըստ Հայաստանի և նրա հակառակորդների ուժերի հարաբերակցության ու նաև դրանց զարգացման ուժականության ու տեմպերի:

* * *

138. Օրենքը երկրի և պետության կյանքի կազմակերպումն ու կառավարումն է: Սակայն օրենքը կարող է հաստատվել բարուց՝ բարի, կառուցողական նպատակով կամ չարից՝ չար, քայքայիչ նպատակով:

* * *

139. Առանց օրենքի մարդկային կյանքն անկազմակերպ է ու անկառավարելի: Ազգային կյանքի ներդաշնակությունը, զարգացումն ու առաջընթացը կախված են լավ՝ օգտակար օրենքների հաստատումից և դրանց լավ ու արդար կիրառումից:

* * *

140. Լավ օրենքը հաստատվում է ճիշտ, լուսավոր հավատքով ու ըստ այնմ՝ Գաղափարախոսությամբ, բարոյականությամբ և բարձր գիտակցությամբ: Լավ օրենքի հաստատումը և նրա ճիշտ, արդար կիրառությունը, վերջին հաշվով, պայմանավորված է խղճի առկայությամբ: Ինչքան մաքուր, զգայուն է խիղճը, այնքան լավ է օրենքը ու արդար՝ դրա կիրառությունը:

* * *

141. Անձի, հասարակության, ազգի, մարդկության կյանքի զարգացման, աճի և բարգավաճման հիմնական պայմանը խաղաղությունն է:

* * *

142. Հայության և Հայաստանի լավ օրենքներով գոյապահպանումը, զարգացումն ու վերելքը պայմանավորված են նաև հայության արժանապատվությամբ, մրցունակությամբ և զինվորականության (բանակի) մարտունակությամբ: Ի սկ դրանք պայմանավորված են հայության հավատքով, գաղափարականությամբ, բարոյականությամբ ու ըստ այնմ՝ ապրելակերպով:

* * *

143. Անձի, ազգի, հասարակության տնտեսապես զարգացման և կենսամակարդակի բարձրացման հիմնասյուն ու մղիչ ուժերից է ազգի (հասարակության) ընդհանուր ու անհատի՝ մասնակի տնտեսական-խնայողականությունը:

* * *

144. Հոգևոր տեսողությամբ քանի որ Հայաստանը սուրբ ու Աստվածատուր է, այդպիսին պետք է լինեն նաև հայն ու հայությունը՝ հավատքով, գաղափարականությամբ, բարոյականությամբ, կրթությամբ, մշակույթով, կենցաղով, գործերով ու ծառայությամբ՝ Աստծուն, ծառայելով ազգին և Հայաստանին:

* * *

145. Երկրի ազգային կոռուսպացվածությունը և դրա աստիճանը որոշվում, փաստվում են երկրի ընտրությունների, հատկապես բարձրագույն իշխանավորի ընտրության օրինականության աստիճանով:

* * *

146. Մեր երկրի՝ մեր հայրենիքի հասարակարգի, սահմանադրության, օրենքների և նման սահմանումների մասին ինչ տարբերակներ էլ ընդունվեն, նույնիսկ ամենամանրակրկիտ մշակվածները, ի վերջո էրոզիայի են ենթարկվելու (չեն աշխատելու), եթե ղեկավարողները և ղեկավարվողները չեն հասել որոշակի հոգեկան, գաղափարական ու բարոյական մակարդակի, որն արտահայտվում է նրանց ապրելակերպով:

* * *

147. Ինչքան սուրբ են հայ ազգը, հայությունը և հայկականությունը, այնքան սուրբ են հայոց պետականությունն ու պետությունը և դրանց գործերն ու ընթացքը դեպի Աստուծո հավերժական կյանք:

* * *

148. Հայոց հավաքական և միասնական լծակցության Ուսը պետք է լինի ամուր՝ նախևառաջ Աստվածաշնորհի հավատքով, գաղափարականությամբ և բարոյականությամբ՝ ազգի, հայրենիք Հայաստանի և պետության դժվարին ու սուրբ լուծը՝ Խաչը տանելու համար:

* * *

149. Հայ ազգի, Հայաստանի և պետության կարողությունը յուրաքանչյուր հայի մեջ է, յուրաքանչյուր հայի ձեռքերում է: Հետևապես, ազգի, հայրենիքի և պետության պաշտպանությունը, զարգացումը և վերելքը յուրաքանչյուր հայի գործն ու պարտականությունն են և պայմանավորված է նրանց որակով:

* * *

150. Չկա որևէ հարց, խնդիր, դժվարություն և կամ վտանգ, որից հայությունը չկարողանա խուսափել կամ այդ լուծել և կամ հաղթանակել, եթե յուրաքանչյուր հայ անձնապես ու հավաքականորեն ձգտի այն անել խղճով ու ըստ այնմ՝ պարտաճանաչության և պատասխանատվության անկեղծ, ազնիվ զգացումով՝ հետևողականորեն և հարատևորեն:

* * *

151. Հայությունը, հայ ազգը պետք է կարողանա՝ ստեղծել ղեկավարություն՝ հայ ազգային ղեկավարի հարազատ, տոհմիկ կերպարով, որով և հոգեղենությամբ, գաղափարականությամբ, բարոյականությամբ և խղճով:

* * *

152. Ինչքան պակասում է հավատքից բխող և դրա վրա հիմնված գաղափարը, այնքան ավելանում են անբարոյականությունը, նյութապաշտությունը, և չքանում են նախանձախնդրությունը, նվիրումը, պարտաճանաչությունն ու հանձնառությունը: Բարոյական արժեքները չեն գոյանում ու ապրում դառնում առանց գաղափարի, որը բխում է հիմնված է Աստծո հավատքի վրա, Ավետարանով և Խաչով:

*Հարգանք
Գրեթեմպ*

ԽՈՂԵՐ, ԱՍՈՒՅԹՆԵՐ, ՊԱՏՖԱՄՆԵՐ

Համակարգչային էջադրումը և ձևավորումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 842
Ստորագրված է տպագրության՝ 05.03.2018թ.:
Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆, 9 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 1000 օրինակ:
Գիրքը տրամադրվում է նվիրատվությամբ:
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: